

Դյու.
~~Օ.Ա. Ա. 6-182~~

Տ. 709


Գ. Գ. Ե Ր Ե Լ Ե

ԱԼԹՈՒՆ ԴԵՐԵՍԻ

Խ Ե Ր

ՄԻ ԳԻՇԵՐ ԲԱՂԵՋԻ ԲԱՆՏՈՒՄ

1893—96



Օ Տ Ֆ Լ Ը Ս Ա

1910

ET 6 NOV 2011

Հ Արմ.
Հ 2-46152

2-46150

Գ. Գ. Շ Ե Ր Ե Ն Ց

891.99

0-51

ՊՊԿ

ԱԼԹՈՒՆ ԴԵՐԵՍԻ

Կ Ե Մ

ՄԻ ԳԻՏԵՐ ԲԱՂԵՅԻ ԲԱՆՏՈՒՄ

1893—96

Խն. № 22483

Թ Բ Ֆ Լ Բ Ս

Տպարան «ՊՐՕԳՐԵՍ», Դվորց. փողոց:

1910

19 JULY 2013

47585

ՊՈՅԱՐ ՃԱՌԱ

Սոյն գլուխց 80 օրինակ նւիրւած է Վանայ
«Հոփիսիմեան» մանկապարտիզին և 20 օրինակ
Վանայ միւս ծխական ուսումնարաններին:

Գ. Շ.



40756-67

Այ հետ սկս շատենանց զգայշուր զի առք մյա
բանն ըմբացայ զեզուու պահու ցիւնցը
այսին այ ամսու ունանուուու զայ նո սատան
տար ունանու ուր եւ այ այ պահու այս

ՄԻ ՔԵՆԻ ԽՈՍՔ ՑԱՌԱՋԱԲԵՆԻ ՏԵՂ.

Այս զրբոյկը ես վերջացրել էի և մամուլին յանձ-
նելու պատրաստութեան մէջ, 1908 թ. յուլիսի 11-ի
առաւոտեան, անսպասելի կերպով Կ. Պոլսից հասած
հեռագրական և թէ լրագրական տեղեկութիւններից
առնւած, աւետում էին, որ «Սուլթան Համիդը ի քա-
ռութիւն իւր հպատակներին երեսուն երկու տարւայ
ընթացքում տւած չարչարանքին և արխանեղութեամբ
գործած ոճիրներին, երիտասարդ թուրքերի բուռն
գործելակերպի ձնշման տակ, վերահաստատում է ե-
րեսուն երկու տարի առաջ (1876 թ.) տւած և յետ
խլած «Կանոնի էսասին», Միտհատեան Սահմանա-
դրութիւնը»:

Ըստհանուր կայսրութեան մէջ՝ խորտակւած հին
ոէժիմի տեղ, սկսւել է ցնծութեան աղաղակներով տօ-
նել այդ նորոգւած վրկարար միջոցի վերականգնուումը,
նշանաբան ունելով «կեցցէ սահմանադրութիւն, աղա-
տութիւն և հաւասարութիւն»: Ժողովրդական ներկայի
ցոյցերն իւր տեղն թողնելով, սպասենք գործին և հե-
տևանքին, տեսնենք երիտասարդ թուրքերի և կազմա-
կերպութիւնների լուրջ գործունէութիւնը յօգուտ ընդ-
հանուր հայրենիքին, մեծ յոյս տածելով որ հայաշնչ
քաղաքականութեան տեղի տալով հայաձուն քաղաքա-
կանութիւնը, ի սիմբոլ աշխարհի տարածւած վտարան-
դի հայն՝ կդանայ կրկին իւր աւերակների նորոգման
և հաստատութեան: Բայց մի ցաւալի և տխուր կէտն

այն եղաւ, որ պատրիարք Օրմանեանը այս մեծ յեղաշլումից տուժեց, հեռացւեց պաշտօնից ոմանց գրգռիչ համոզութերի տակ...

Խոստացւած բարենորոգումներից տակաւին միայն երկու նշանաւոր հարց է ի գործ դրսել. առաջին՝ ազատ երթեեկութիւն կայսերութեան բոլոր սահմաններում, վերադարձ զաղթականների իրենց բնակավայրերը և երկրորդ՝ ընդհանուր ներում քաղաքական բոլոր յանցաւոր բանտարկեալների և աքսորականների, որոց թւումն էին և նշանաւոր օսմանցի գործիչներ, արքայացն Սարահեղին, Ահմէդ Բիզան, մեր երկաթէ պատրիարք սըրբազան իզմիրի հանց, մեծ գրագէտ և լեզուգէտ Մինսս Զերազ և այլքն, որոց մեծաղղորդ ցոյցերով և դիմաւորութեամբ ընդունեց կ. Պօլսոյ ժողովուրդ:

Ամեն. սրբազան իզմիրի եանց ազգ. ժողովոյ միահայն հաւանութեամբ մի քանի ամիս ևս ժառանգելով պատրիարքական աթոռը, փոխանորդ թողնելով Արշարունի Օհաննէս եպ. անցաւ կաթուղիկոսական թեկնարուների շարքում և 1909 թ. նոյ. 1. ա. էջմիածնի տաճարում կայացած պատգամաւորական ժողովում ընտրվեց Ա. կանդիդատ (երկրորդն էր Եղիշէ եպ. Դուռեան, ապա յաջորդ պատրիարքի) որի ընտրութիւնը յուրաքանչ աղջիկ նոյն թ. Ապրիլ 7-ին հաստատեց Նորին Մեծութիւն Նիկոլայ Բ. կայսրից:

Այն ինչ օսմ. լայնածաւալ պետութեան հայտակները սպասում էին վերականգնած սահմանադրութեան գործադրումից բարւոքել իրանց նիւթապէս և բարոյագործադրումից բարւոքել իրանց նախարարի կերպով 1909 մին քայլքայւած դրութիւնն, անսպասելի կերպով ապէս քաթ. ապրիլի սկզբից՝ սկսեց նախ կ. Պոլսում ապա գաթ. ապրիլի սկզբից՝ սկսեց նախ կ. Պոլսում ապա գաթ. ապաներում յեղաշլումի հակառակն. հակառահմանաւանդների ապարդիւն և վնասակար եղբայրասպան դրականների ապարդիւն և վնասակար եղբայրասպան

V
-իո միջնամյածի դրամով վաճառական գործարքութեան մասնակի մէջ կեղծեցին. որին իւր սաղմանի մէջ կեղծեցին և հաւատարիմ մնացած երկրորդ, երրորդ և չորրորդ գօրաբանակները իրանց քաջարի ղեկավարներով: Մի շաբթաւյ ընթացքում, Սելանիկից արշաւելով, պաշարելով կ. Պոլսոյ բարձունքներն և երլրզի պալատը գահնկնեց անելով կարմիր Սուլթան Համիդ, նոր կայսր հաւատարկեցին նորա եղբայր Ռէշադ էֆէնտին՝ հինգերորդ Սուլթան Մահմէդ անուանելով: Բացի բէակցիօն, խաւարամիտ պաշտօնեաններից, ամեն տեղ ցնծալի աղազակներով ընդունւեց այդ կրկնակի յաղթութիւնը: Հակասահմանադրականներից բազմաթիւ պաշտօնեաններ և մի կարգ ուլէմները մահւան վճիռ ընդունեցին և ոմանք աքսորւեցան: Իսկ Սուլթան Համիդը իւր հարևմով՝ որպէս ոճրագործ կալանաւոր աքսորելով Սելանիկի փակցին Ալահէղինի սարայում, զրկելով արտաքին տարեկան աղայացին հանրային կոտորած, հրձիգութիւն, աւանդալամ: Պաշտօնական ցուցմունքներով կոտորւածների թիւը հաստատում է մօտ 25—30 հազարի, որոց մէջն են եղբայրի և միախարի գաղթականներ և միախարիները:

Աղանայի և Կիլիկիոյ պաշտօներում տեղի ունեցած այս եղբական ջարդերի, սոսկալի աւերածութեանց, այլ և նոր-մէսոն թուրքերի, և նոր կառավարութեան բնած ընթացքին, ի վաս հայ ազգի արքէն կղած առանձնաշնորհների և արտօնութիւնների պատճառաւ, պատրիարք Դուռեան՝ Եղիշէ սրբազնը, ստիպած հրաժարւեց, պնդելով միշտ իւր պահանջների գոր-

ծաղրութիւնը, ջարդերի զլիսաւոր հեղինակների օրինական պատիժը: Ապա հինգ ամսից վերջ 1910 թ. յունվարի 30-ին դարձաւ աթոռ:

Նորբնտիր հայրապետ Տէր Մատթէոս Բ. Իզմիր-լեանց, ըստ Բարձրագոյն հրաւերքի 1909 թ. մայիսի 29-ին մեկնելով Կ. Պօլսից, անցնելով սուսաց սահման, Ս. Պետերբուրգ, ներկայանալով Կայսեր, այցելելով Մոսկավ և այլ հայրանակ քաղաքներ, ամեն տեղ ընդունեց ջերմագին ցոյցերով, ովսաննաներով և փառադոր դիմաւորութեամբ:

1909 թ. յունիսի 14-ին մտաւ Տփխիս աւելի շրջեցափայլ հանդիսաւորութեամբ, թէ կառ. և թէ ժողովը կողմից արւած արժանավայել յարգանքին չափու սահման չկար. Նորին Սրբութիւնը հազիւ մէկ շարաթ մնալով Տփխիս, անցնելով Ալեքսանդրապոլ, Կարս քաղաքներ, այցելեց և Ասի մայրաքաղաք, որտեղից ս. Եջմիածին:

1909 թ. սեպտ. 12-ին մայր տաճարում կատարելով իւր երգումն ի ներկայութեան կառ. բարձր պաշտօնէից և պատգամաւորների, նոյն սեպտ. 13-ի Վերացման Խաչի տօնին՝ ընդունեց ս. Օծումն, ժառանգելով հայոց քաղմաջարեան գահն: Նորին ս. Օծութիւնից սպասում է հայ ազգը իւր քաղմաջարչար եկեղեցւոյ և հօտի ցանկացած վերանորոգումն:

Բայց և այնպէս, օսմ. երկրում ժէօն թուրքերի այնքան հարա-հրցով, ցնծութեան աղաղակներով հըռչակած սահմանադրութիւն, աղաղատութիւն, հաւասարութիւնը տակաւին անւանական ցոյցեր են, տակաւին նորք աղաղայնական գաղափարով են գործում: Իսկական գործադրութիւնը մեծ յեղաշրջումների է կարօտ, և մենք սպասում ենք:

Գ. Շ.

ԱԼԹՈՒԻՆ ԴԵՐԵՍԻ

և ս. Մ

ՄԻ ԳԻՇԵՐ ԲԱՂԵՇԻ ԲԱՆՏՈՒՄ

Ա.

Վասպուրական նահանգի, ինչպէս և Տաճկաչայաստանի հայկական զլիսաւոր մասերի ազգաբնակութիւնը, զլիսաւորապէս հայեր, 1893 թւականից սկսել էին արդէն մի ինչ որ ազգայնական տեսդով «հայկական» յայտնի հարցի շուրջը շարժումներ գործել:

Մի տեղ՝ յայտնի թէ գաղտնի, սպասում էին սուլթանի կառավարութեան պնակալէզ պաշտօնեայք (հայ թէ թուրք), մի այլ տեղ՝ կոսորում էին ժողովը կողմից արդար իրաւունք պաշտպանող հայ երիտասարդներ—ֆէղայինները, մի այլ տեղ՝ հրդեհում էին գիւղեր և ազարակները, այնպէս որ՝ աչքի ընկնող երիտասարդ և պատանի հայը ազատ չէր ձերբակալումից. և Սասունը սկսել էր իւր նահատակութեան նախերգանքը. քրդական-համիդէական լէգէօնները շար ի շար գանքը. քրդական-համիդէական լէգէօնները երկիր: Նայելով տառվերում էին դէպ Քաջաց երկիր: Նայելով տարածւած ոչ նպաստաւոր լուրերին և տեղական կառավարութեանց ընած այն որոշակի սիստեմին, մօտիկ աղաղայում հանրային կոտորածը հայ քրիստոնէից դէմ անխուսափելի էր երևում:

Այդ կրիտիկական-տեհնոգային ժամանակին էր, որ տողերիս գրողը հրաւեր ընդունելով Բաղէշի ս. Գէորգ

ուն և առ առյուղ մ 9 — լուսպատ լուսակ աջա
սահ (ամիսի) լուսակ ժամացաւագրի ժամաց ըդար ըդար
ապաւոյ զգով մի օն թ. մ լուսական ժամաց այս մ ապաւոյ
առ այս ամացաւագրի ամացաւագրի ամացաւագրի ամացաւագրի
**Ապաւոյ-ձոր կամ Բաղէշ և այժմ Բիթլիսի կուս
սակալութիւն, ըստ հայ պատմական-աշխարհագրու
թեան «Մոկաց» նահանգի երեք գլխաւոր գաւառներից
մինն է, Վասպուրականի հարաւ-արևմտեան կողմ. հա-
րաւից սահմանակից է Աղճնեաց կամ Տիարպէքրի-
Տիգրանակերտի կուսակալութեան. հիւսիս-արևմուտ-
քից Կարսոյ: Արևելքից մինչե կորպւաց լերինք հին-
Աղքակ նահանգ, իսկ արևմուտքից Մշոյ և Սասոյ
սահմանները:**

**Բիթլիզ կամ Բէյթ-Լիզ արաբական լառ է, նըշա-
նակում է տուն լիզի: Արաբական պատմութեան մէջ
մի կտորը լուսաբանում է հաւսեալն, որ Ալեք-
սանդր Մակեդոնացոյ կուսակալներից մէկի- լիզի ա-
ռունով կոչւել է Բիթլիզ: Իսկ Սահնոյ ձոր կամ Բա-
ղէշ-Բաղէշ յորչորջում է տեղական ընտիր սալահանքե-
րից և պալերից:**

**Բաղէշ քաղաքը որպէս կենդրութայքը նահանգի
ինչպէս հսում, ոյոյ և 1895—96 թ. հանրային կոսո-
րածից առաջ էլ առաջանացոց նշանաւոր դաշտավայ-
նական-շահաստան մի քաղաք է:**

**Օդը և ջուրը առողջաբար, շրջապատում մէծ և
փոքր այցիներով: Բրակէս բանուկ արանտ, տրտածելի
և ներածելի ապրանաց շաբան-շաբան կարտաները
միշտ անպական են այստեղից:**

**Մինչե հանրային կոսորած (1895 հոկտ. 15) ու-
նէր մօտաւորապէս հինք նազար տուն բնակիչ, որից
հաղարն քրիստոնեաներ էին, մէծ մասամբ լուսաւոր-
չականներն ապա բողոքականներ, կաթոլիկներ և ա-
սորիք:**

Բաղէշի առևտուրը մէծ ծաւալ ունի գլխաւորա-

**Եկեղեցւոյ հոգաբարձութիւնից, 1893 թ. սեպտ. ամ-
սում, Վանայ վերաքննութեան ատենի նախագահ,
Ահմէդ-Վասիֆի էֆէնդիի հետ ճանապարհ ընկայ գէպ
Բաղէշ:**

**Ահմէդ-Վասիֆի էֆէնդին Սիրիացի արար էր, կի-
նը կաթոլիկ քրիստոնեայ, երկուքն էլ բաւականի զար-
գացած յառաջադիմական գաղափարով, չհամակերպելով
կուսակալ Բահրի փաշայի կամայականութիւններին,
ևս առաւել նորա շուրջն պատող այն պաշտօնեաների
անարդար վարմունքին, նոյն պաշտօնութիւնից վոխալլվեց
Բաղէշ. բայց գարձեալ իւր ուղղութեան հակառակ մի
վայրում...**

**Մեր կարաւանը բաղկացած էր մի քանի հայ և
թուրք վաճառականներից և չորս հեծեալ զավթիա-
պահապահներից: Վանից անցնելով Արտամեդ գիւղի
գրախտանման այգեստաններից՝ մտնում էինք Հայոց-
Զոր գաւառակ. անտի ստորին և վերին Ռշտունիք,
կտրելով կապուտակ ծովի եղերագիծն կտրում էինք և
մի քանի գժւարանց կապանները. Կարճկանի կոյս անչ
տառների միջով, չորս օրից վերջ մտանք Բաղէշ:**

**Զնայելով այն զիմաւորող պաշտօնեաներին, ու-
րոնք ի պատիւ նախագահին եկել էին ընդ առաջ, գեռ
չմտած քաղաք, թաղաղումի կոչւած տեղում, բացի
նախագահից և պահապան ոստիկաններից, բոլորս էլ
խուզարկեցանք: Բայց ոչինչ, այդ մենք գիտէինք, որ
թիւրքիայում այդ կերպի վարմունք սկսւել էր գեռ
տարիներից առաջ, և փշուր մի թղթի կտոր անդամ
կենթարկեր խիստ քննութեան և թարգմանութեան:**

**Մեր առաջին հանգիստն առինք Մըխչեանց Սեղ-
րակ էֆէնդիի հիւրասէր հարկին տակ, ուր և վայելե-
ցինք հանգստի սուրճը, բոլոր ուղեկիցներով սեղանակից
եղանք և ասա ամեն ոք իւր որոշ տեղն:**

պէս Վանայ, Կարնոյ, Պոնտոսի, Կ. Պոլսոյ հետ, և հարաւից՝ Սղերտի, Տիգրանակերտի, Եղեսիոյ (Ուրֆա) Հաւլէպի, Դամասկոսի և Սիրիոյ մեծ թէ փոքր հրապարակների հետ: Թողունք Պարսկաստան, որտեղից ընդունում է մեծ քանակութեամբ բամբակ և թանկագին գորգեր. վերջին տարիներում նորա վաճառականների մի մասը ընտելացաւ Ռուսաստանի հետ էլ, թաւամազ կենդանիների մորթերը արտահանելով մինչ Մակարիայ, Մոսկւայ և այլ կենդրներ, փոխարինում էր տեղական ապրանքի հետ:

Արտահանւած ապրանքի մէջ անւանի էին կարմիր-շիլան, կտաւ որ ասիական—գիւղացի ժողովրդոց միշտ գործածական է. այծի և ոչխարի բուրդն ու գեաժթիֆթիկն, կղտոր, առաւելապէս կաշեղէն մորթի, ուրոնք մեծ տեղ են բանում երկրի անտեսութեան մէջ:

Նիւթական այսքան առաւելութեան մէջ ճոխացած մի քաղաք, որպիսին էր Բաղէշ, իւր ազգաբնակութեամբ, ցաւելով յիշում եմ, որ տակաւին շատ քիչ զոհողութիւն էր արել իւր բարոյական կրթութեան համար: Հայերը ունէին չորս եկեղեցի Ս. Կարմրակ, ուր և առաջնորդաբանն է, Ս. Սարգիս, Ս. Կարապետ և Աւել մէյդանի ո. Գէորգ իրանց չորս ուսումնարաններով, երկուք պարզ նախակրթաբան և երկուքն, ըստ տեղոյն՝ բարձր նախակրթաբաններ: Իւրաքանչիւր եկեղեցին ունի և իւր թեմական վանքն:

Այսպէս, Խնդրակատար ո. Աստուածածնի վանք ո. Գէորգայ թէմին, Աւելից կամ Առաւելից ո. Թաղէսի վանք ո. Սարգսի թէմին, Ամրորդոյ կամ Ամրորոյ վանք ո. Կարմրակայ, թէմին: Եղել է մօտիկ անցելում, որ առաջնորդաբանը գտնւել է Ամրորում, Գօմաց վանք, ո. Կարապետի թէմին: Յիշեալ չորս վանքերից միայն Գօմաց վանքում կար «Միաց-

եալ ընկ.» մի նախակրթաբան,—որի ծախս մասամբ հոգում էր յայտնի վաճառական մահտեսի Շողիկեան մահտեսի Ղարիբջան աղան:

Նայելով հայերի այն սակաւութեան և ժամանակի, տիրող ոչժմի խոշնդուտ քաղաքականութեան, մեծ առաւելութիւն ունէին թուրքերի վրայ, ձգտում ունէին աւելին կատարելու: Ըսդհակառակն՝ թուրքերն ունէին միայն կենդր, քաղաքային մի ուսումնարան, և մի քանի տեղեր էլ հիւջըններում պարզ նախակըրթաբաններ, որոնք մեզ յայտնի էին արդէն իրանց բոլոր ուղղութեամբ...

Գ.

1893 թ. սեպտեմբերի սկզբից, Բաղէշում ես արգէն ո. Գէորգի գալրոցում սկսել էի պաշտօնավարութիւնս: Մեր ուսուցչական կազմը համերաշխ էր*):

Պաշտօնակիցներս էին աւագ ուսուցիչ պ. Մ. Մկրեան, պ. Յարութիւն Դուզութիւն յայտնի լեզւագէտ, և ես: Իւրաքանչիւրս սերտ կապւած գործին հետ և ինչ օրինակելի համերաշխ գործունէութեամբ:

Նոյն 1894 թ. մարտի 15-ի առաւտեան ժամի 11-ին, այն ինչ զբաղւած մեր պարապմունքով, ուշագրութիւնս լարւած էր զէպ աշակերտները, անսակընկալ ներս մտաւ դասարանից՝ թաղային մի պաշտօնեայ՝ սատիկանը գուրս թողնելով:

Պաշտօնեան առանց խանգարելու իմ պարապմունքս, ամենայն փափկանկատութեամբ նստեց հրամցուցածս աթոռին վրայ:

*) Մեզ հետ պաշտօնակից էր նաև Արուսի Հրաչեան, «Միացեալ ընկ.» նախանդբանիկ սաներից:

տարագրւածների թւում: Մասնաւորապէս ասենք, դեռ
1885 թւականից՝ վանից սնուի պատրւակներով տա-
րագրւեցան՝ Մ. Փորթուկալեան, Տաճառի Արմլանեան
և Արտլանեան, Մ. Թէրէմէզեան, Օտենան և այլքն, և
քանի քանիսներ, որոնք չարփուց, չար տապասկ էին
փանատիկ թուրքերին...»

Բաղէշի դժոխք զնդանում վիստում էին բազմաթիւ
քաղաքացի, գիւղացի, երիտասարդ, ծեր, վաճառական,
արհեստաւոր հոգևորական կապեալներով որոնք բո-
լորն էլ նոյն հարցի «Քրմէնի մէսէլէսիով» տանջւած:
Ես շարունակեցի իմ գործը, էլի մէկ ամիս
հազիւ:

Բայց վայ աշդպիսի շարունակութեան, երերեալ
վիճակի:

Ստացած և վերահսու եղած տեղեկութիւնները
վանից շատ տիսուր և աննպաստ էին: Այսօր չէ վաղ,
վաղ չէ և միւս օր՝ ես միշտ սպասողական դրութեան
մէջ էի, չիմիտի ազատէինք...

Բազգալեան էֆէնդին առանձնապէս խիստ պըր-
պտերով գատախաղի միտքն ու դիտաւորութիւնն ճիշդն
իմացել էր ամբաստանութեան զլխաւոր շարժառիթ-
ները, իսկական աղբիւրը թէ ինչպէս էր գոյութիւն
ունեցել, իբրև թէ մենք Վանում ունեցել ենք ժողով-
ներ, և մեղանից մինը երգեր է յօրինել և երգել և
սովորեցրել ինչպէս Վահում և նոյն Բաղէշում:

Երգեր խեղճ երգեր, այժմ և միշտ հալածական
երգեր:

Վտարանդի աղգայնական երամից, և պատա-
պի պատմէր այն ամեն ներշնչումները եթէ դուք Շի-
նէիք. ով ապա պիտի աղդէր հայ-մանուկ սրտերի փրայ,
հայ ժողովրդի և այլոց վրայ, ով պիտի պըրպէր հայ-
րինեաց ամեն անկիւնները, ինչպէս դուք կը հսկեք

վեստի սիստ գլու Շահնշահնակամ վե և մայ յու
համելիքան վախանակամ վանակից և հանգակից է եղել

Այդ պահին ևս անցնումէի օմա: պատմութիւննից
այն կտարը թէ առաջին Օսմանը յաջորդելով էրթուղրի-
մն, ինչպիսի քաջութեամբ հիմնեց ներկայ բայնածառ
և ալտէրութեան ևայլն...

Փոխանակեալ ճարդաբնառութիւննից հասանք այն
եղրակացութեան, որ առգերիս զրոյը և վանում Արա-
րուց ուսում, ուսուցչական խռոմը և հոգաբարձութիւնը
ամբաստանել ենք ինչ որ՝ «Քրմէնի մէսէլէսիով» հայէր.
հարցում: Նորաբանդարկւած էին Վանում, ինձ էլ հը-
րաւիլեցին հմկողութեան տակ մնալ հաղէշում:

Այ քեզ մատանի շատ, նկատեց ընկերներից ս
մինչ անբախտ Յ. Դուկուխեանց*), որն նոր էր ազատ-
ւել Ալաշկերտի և ապա Բայրազէտի բանդից:
Բարեբարդարտար նոյն ժամին, իմ ձերբակալու-
թեանու լուրը համնելով հոգաբարձութեան, իսկոյն ևի մ
տեղոյն երևելիներից՝ Բագդակւան Աղաջան էֆ, վրայ
համսելով նրա երաշխառութեամբ առժամանակեաց
ազատ մնացինք բանդարկւելուց:

Ուսուցիչներ, նահատակ ուսուցիչներ, ամեն տեղ
ամեն յետ ընկած քաղաքում և գիւղում նոքա աւելի
են տուել. մեծ տոկոս են կազմում բանդարկւածների

*) Դուկուխեանցի հետ պաշտօնակից և բանդակից է եղել
վերջերս ողբացեալ Սարգիս Դազարեան-Հայկունին, աշխատաւոր
բանահաւաք, որը թագւեց և էջմիածնում. 1908 թ.

հայութեան վրայածայ լեզւին և հայ կրօնին, դպրուց հայութեան վրայ, նոյն պահպանումին վրայ. ապա ի՞նչ թեան վրայ, նոյն պահպանումին վրայ. ապա ի՞նչ առը զգացմունքները սազմնամեռ պիտի լինէին, եթէ տուք չըպուտքայիք, չըլիմէիք. զգացմունքների խորդքերից:

Ամիսը լրացաւ և ես կրկին կանչւեցայ նոյն դատախաղի և ոստիկանապետի մօտ, որ ժամանակ ոստիկանապետ Ալայշը ասաց ինձ.

— Բարեկամս, այս գիշեր այստեղ հիւր կը մնաք, մինչև առաւօտ՝ կը կարգագրենք:

Լսելով այս փափուկ հրաւէրն, ոստիկաններից մինը ինձ առաջնորդեց ոստիկանապետի հրամայած հիւրանոց...

Այդ կերպի հիւրանոցները տեսնելու շատ անգամ ե պատահել է ինձ: Փորձառութիւնս ինձ երբէք չըլըշ մացըրեց. հետեւցի զապթիւյլին: Իշնում ենք քանի մի աստիճաններով ցած և խոնաւ խորթաբուրթ յատակով, աստիճաններով ցած և խոնաւ խորթաբուրթ յատակով, աստիճաններով նըրանցքի մէջ, և անտի զնոպն պահպանող զապթիւնների նոյնքան մթին և խոնաւ կօվուշ պահականոց:

— Հիմայ նստիր այստեղ և լաւ երգիր ֆէղային երգերը—լի հեգնութեամբ ասաց զապթիւնս ու մեկնեց, յանձնելով ինձ բանտի զլիստրին և ոստիկան յինապետին:

Ես մնացի ուրիշ այլ ևս երեք պատուալոր թուրք բանտարկեալների մէջ:

Այդ օր աւագ չորեքշաբթին էր, յաջորդ առաւօտ, աւագ հինգշաբթին, մենք ուսուցչական խմբով և աշաւեարկեաներով պատրաստել էինք փառաւոր տօն կատակերտներու հաղորդելու և ոտնալւայի հանգէն փառաւոր ըելու, հաղորդելու և ոտնալւայի հանգէն փառաւոր կատարելու ըստ փափափանաց ժողովրդին:

Տարակոյս չունէի կասկածելու, որ շատ շատերն

պիտի ցաւակցէին ինձ հասած դժբախտութեան համար:

Այլ ևս նշանաւոր աղաների, էֆէստիների միջնորդութիւն, երաշխաւորութիւնը (լինէր թէ դրամով) օգուտ չունեցան, մենք ևս ընկած էինք ակնատ, վան գնալու համար էի մտածում, բայց ի՞նչպէս:

Մի քանի անգամ այդ կերպի փորձանքները մի տասնեակ ընկերներով անցուցել էի ես: Առաջին անգամ 1885 թ. յունիս ամսում Տիխիսից Վան վերադառնալիս *). երկրորդ անգամ 1886 **) սեպտ. ամսում, որ ժամանակ Վանում Թահիրեան-Պօղոսեան, Հասանեան-Ալողոսեան կուսակցութիւնները սուր կերպարանք էին առել. երրորդ անգամ 1888 թ. մարտ ամսում, որ ժամանակ ես բանտում, կորցըրի իմ անդրանիկ Աղասի որդիս... և չորրորդը այս: Բայց այժմ քաղաքականութիւնը փոխած, նրին, մանրազնին հետաքրքրութեամբ էին հետեւում գործին, լինէր նա ոչ կասկածանքի ենթակայ, այժմ եղը վերցրած, տակից հորթ էին փնտուում:

Մեր ինդույն՝ Վանայ ամբաստանիչ ատեանը խիստ պատժական կերպարանք էր տեկ: Գործը յանձնելու պատժական կերպարանունութեան ատենին: Փաստաբան,

*) 1885 թ. բանտից աղատեկով մի ժամանակ ինձ արգելեցին ուսուցիչ մինելու: Կուսակալ Բահրի փաշան նշանակեց ինձ Քաջերունեաց-Արջշշ-զաւաուի զլիստր հարկանաւարչի պաշտօնին, որտեղ և զործ պիտի ունենայի աշբըթ քրդերի հետ, մի տարիից վերջ կրկին տեղի ունեցաւ երկրորդ բանտարկութիւնս...

**) Երկրորդ անգամի բանտարկութեանս ընկերներն էին՝ Թօլսմախեան Արսէն վարդապետ, Թօսունեան Դանիէլ վարդապետ, Բաղէշնեան Գալեկին (որոց նահատակելու չափ տանջեցին), Նախնեան Կ., Խանիկեան Մ. և ապա Մաքսապետեան Մկրտիչ և ալլքն, թւով քսանից աւելի. բոլորս էլ յայտնի հարցով բանտարկւած և աղատուած....

պաշտպանների պէտքը խիստ զգալի էր և այդ գործի համար Վանում արդէն նախատեսել էին, յանձնելով Խանջեան Նշան Էֆէնտիին *):

Պահապան զինուորների կօգուշը, ուր ինձ պահ տվին, բանտի կամ զնդանի նախագաւիթն էր: Այդուղ էին ապրում բանտապետ, յինանապետ և այն երեք բանտարկեալները, որոց չորրորդ թիւը ևս կազմեցի:

Դ.

Տակաւին արարաշխարհի վրայ սփուռած ու տարածւած էր արեգակի վերջին ճառագայթները: Շուտով այդ նախագաւիթ բանտումն ևս տիրեց աղամային մութ խաւար:

Մի միայն հարաւարեկեան կողմից բացւած երկաթեայ հաստ շիշերով ամբապնդւած լուսամուտից նշաբեռում էր ազօտ լոյսը և խորանդը ձորից խոխոջազող առակի ձայն լսելի էր լինում:

Մինչև ճարպամոմի վառեն, մի քանի փոխանակեալ զրուցատրութիւնից յետոյ, ապա իմացայ թէ ևս որոց հետ բախտ եմ ունեցել մի գիշեր հիւր մինելու և ինչերը անմսելու ու լսելու:

Այդ երեք բանտարկեալներից առաջինը խօրօզցի քուրդ աշխերէթի ցեղապետն էր. մի թիկնաւէտ հաստուկը տղամարդ, որից պահանջում էին մի քանի տարւայ իւր էշալթին պատկանեալ տուրքերն, և կուսակալ

*) Խանջեանները Վանում մեծ զիրք ունեին թէ ազգային և թէ կա. սարձր շընաներում. 1896 թ. հանրային կոտորածին Հայրապետ և Նշան Էֆէնտիինը ապաստանելով Դալիք փաշայի տան ի թիւս բաղմաթիւ հայերի և նորա չարաշար սպանեցան, մարմինքն անգամ չգտնեցան....

Թահասին փաշանը հագիւ հազ այդ լեռնցի գաղանը գցել էր իւր ակնատն զրամը գանձելու:

Երկրորդ Բաղէշի բոլոր պաշտօնեաններին նախածանօթ սափրիչ Մահմէտ, մի խիստ կատակաբան միւմու, և երրորդ մի այլ նազելաճեմ էֆէնտի, որն ամբաստանւած էր զրամանեննութեան մէջ:

Սյս երեքը, որքան որ բանտարկւած էին և մինը քրէական յանցաւոր, բայց և այնպէս ակնածելի էին երեսում յաշս բանտապետի և զինուորների, ամէնքն միւմասին՝ սոցա հլու կամակատարներ էին:

Այդպէս վերաբերմունքի գաղանիքն ես յետոյ իւմացայ, և բանը ինչումն էր որ, սատիկանները շոյում և հապճիպս կատարում էին նոցա պատէրները:

Բնական էր որ՝ ես ընկած աւելի հոգեկան սըրտմաշուկի և մտմտունքի մէջ, ոչինչ չէի կերել. և ուսեւ էլ ախորժակ չունէի:

Թուրքերի Ռամէզանի-ծոմի ամիս լինելով և նոքա պահերով իրանց սովորական ծէսն, օրօջ էին. և ըսպասում էին երեկոյեան ազանին, ազօթելուց վերջ ապա ծոմարաց անէին ախորժանամ կերակուրներով:

Մահմէտական աշխարհում, մանստանդ Բաղէշում, ուր իսլամի ֆանատիկ ձեւականութիւնները և ծէսերն աւելի խորն են թափանցել, նոցանից մինը ծոմապահութիւն—օրօջն է: Բայց ինչպէս, ամբողջ օրը խոռվիր, ծեծիր ու ծեծւիր, հայնոյիր ու թակիր խեղճ զեափուրներին, այդ ոչինչ ներելի է, բայց բաւական է՝ որ օրօջդ պինդ ես պահել:

Ցորեկւայ թագուհին-արքեր իւր սովորական շըրջանառութեամբ արգէն ծածկել էր շուրջը պատող լեռների հոտեւմ: Կէս ժամից վերջ ձորամէջ քաղաքի բաղմաթիւ մինարէթներից, մզկիթների տանիքներից ըսկուեց թէ խոպոտ և թէ դի հաններով կանչել «մակրիպի



ազանը — երեկոյեան աղօթքի հըաւէրնը ալլահու աք
պէր — մեծ է Աստւած:

Բանտի զանազան անկիւններից և նկուզներից ի-
բարու հրհրալով՝ գուրս թափւեցան շղթայակապ թէ
անշղթայ բանտարկեալ կալանաւորները, շտապան կա-
տարելու ավղէվթներացումն. աղօթքել և ծոմարաց ա-
նել: Նոյն կատարեցին և իմ բանտարկից ընկերները:

Աղօթք վերջացաւ և մի քանի կտոր էլ մտամէջ
կարդացին իրենց տեղում:

Այս ժամանակ նախագտաթի գոնով իրար ետկից
ներս մտան երեք հոգի. իւրաքանչիւրն կրելով իւր գըր-
խի վրայ մէկ մէկ լի սինի, լի երեք թէ չորս աման
անուշանուտ կերակուրներով:

Դոքա բանտարկեաների տան սպասաւորներն էին.
Ժամանակին էին հասել:

Թափթի վրայ փուեց զոյնզգոյն նկարներով դրօշ-
ւած սփոսցը, յառաջ բերւեցան այդ պղնձեայ մատու-
ցաբանները:

Սկսւեց ընթրիք, բրիսմուլլան բահման բահմ-
յանուն ողորմած, գթած Աստուծուն նախարանով:

Նախ ցեղապետ, ապա էֆէնդին և ապա սափրիչ
իւրաքանչիւրն իւր կողմից ինձ էլ հրաւիրեցին սեղա-
նակից լինելու:

Սեղանը բազմախորտիկ էր և առատ: Սեղանակից
էին նաև բանտապետ, յիշնապետ և մի սատիկան չա-
փուշ:

Ի դէպ է ասել, որ ընդհանրապէս թուրքական և
քրդական շրջաններում, ուր և ինձ շատ անգամ է ուտ-
ահել հացի խնդրում, կայ խիստ առատութիւն և
մթիւն: Հարցը նրանում չէ, թէ թուրք և քուրդը
կողոպտում, որն այդ նոցա սովորական է.
յնտէս, քրդի, թուրքի սեղանը միշտ առատ

է և աչքը լի: Սեղանի աւելւածով կերակրուեցին և մի
քանի պահապան զապթիւններ էր, և նոցանից աւելա-
ցածով մի քանի անտէր բանտարկեալներ էլ:

Եւ ահա այն զադանիք, որ ես իմացայ, թէ ին-
չու բանտապետը և իւրայինքն շոյում և կամակատար
էին այդ երեք բանտարկեալներին: — Հացն է խօսում
մարդուս — առում է հայկական առածլը:

Ընթրիք վերջացաւ. լւացումից վերջ իւրաքան-
չիւր որ ընկողմանած իւր անկողնոյ վրայ, սկսեցին
ծիել երկար չիրուիներով տատիկու և Մշու ընտե-
լագոյն ծխախոտներից:

Ես էլ ծխեցի, բայց ոչ այն բաւականութեամբ,
որն նոքա ունէին: Աւանց այդ էլ մգացած գաւիթը
արդէն լցւած էր թանձր ծխով և դոքա կրկնապատկե-
ցին օդի ապականեալ զբութիւնը:

Բայց ես նեղուում եմ չարաչար, նեղուում եմ
անհանգիստ: Ժանդիրս խաննած ու տբտմած, մտահոգ
կերպով նայում եմ լուս: Նոքա խօսում էին իւրանց
անցեալից, ցեղապետի առարկան թահուն փաշան էր,
որը ուզում էր իւրան ողլոկել. էֆէնդիի առարկան
ընդհանուր զատախագն էր, որը զրամանենցի գործը
ծանրացրել էր: Իսկ սափրիչի համար զրեթէ ամեն
պաշտօնեայք լաւ՝ թէ վատ էին:

Եւ ինչ հոդ, վաղ չէ և կամ միւս օր սափրիչը
կը կանչէր Աւայշ-բէկից, կը սափրիչը նորան և կաղառուէր:
Ի միջի այլ խօսակցութեանց, ցեղապետը դար-
ձաւ դէպ ինձ.

— Գիշերը խիստ երկար է, խօսիր ու երգիր, ես
գիտեմ որ գու լաւ շարզիներ և հայու երգեր գիտես.
շատ մի մտածիր, կերթաս վան և կազմառես, մեղի էլ
կը յիշես, օմանկու մէմորէյին ալմուն վիշեստեն-
ուկիսպաշտ, կուտաս և կազմառես:

— Բայց աղա ցեղապետ, ևս յանցանք չունիմ և
ոսկիները երբէք:

— Ինչպէս թէ յանցանք չունես. ուրեմն ելավմյէ,
զրպարտութիւն:

Մենք կարճ կապեցինք և նոցա խնդրանաց վրայ
երդերի մի երկու թուրքական տիսուր շարգիներից,
որոնք աւելի իմ սրտին մօտիկ էին, քան թէ նոցա
գլարճութիւն պատճառելու:

Միմեանց վիճակակից բանտարկեալները երբ ծա-
նօթանում և մտերմանում են միմեանց, սկսում են այ-
նուհետև իրանց գլխով անցած ու գնացած չարն ու
բարին պատմել: Մէկը միւսին խելք է սովորեցնում,
մխիթարում, յուսադրում, որէնքներ է բացատրում:
Ճշմարիտ են ասել, որ բանտն էլ մի տեսակ զպրոց է.
այն, իրաւաբանական գպրոց, որտեղ ընկնողը շատ
բաներ է սովորում իր ապագայ կեանքի պահպանու-
թեան համար:

Երեք զօրքայ բանտարկեալները մի քանի անդամ
կրկնելով ու պարպելով իրանց չիրուկները ապա ըն-
կողմնեցան, ընկան Մորփիւլէսի գիրկը. խաղաղ ու
անվրդով խոմբում էին որպէս իրանց տան:

Նոյնպէս ներքին գնդանում եղած բոլոր կալանա-
ւորները մրափել էին, լուսութիւն էր թագաւորել վըշ-
տացեալների վրայ, ամեն ոք թշւառը իւր ցաւն ընդ-
գրկել մրափում էր և կամ խոշտանգում: Արթուն էին
միայն և հրացան ի ձեռին ներս ու դուրս հսկող պա-
հապան գինուրները կրկնելով իրանց սովորական յու-
շարար կոչն. «կարծակծ, հազըր օլ», նոյն սովորական
տօնով ու եղանակով:

Մինչ բանտարին կեանքում, այս եղերական վի-
ճակն էր ներկայացնում ինձ. դուրս քաղաքի զանա-

զան մասերում թմբուկի ու զուռնայի մեծալղորդ ձայնը
ձորերն ու սարերն էր արձագանք տալիս:

Ծովապահ միւսիւլմանները ամբողջ գիշերը անց-
կացնում էին կամ թաղերը շրջագայելով կամ տներ
այցելելով և կամ պարելով, ժամանակին, մինչ արշա-
լուսին՝ ապա կրկին ընթրելով պիտի հանգստանային:
Ինձ համար քուն ու հանգիւ բացակայ էին. ևս
մատանանցնում էի երեսկայելով վանում պաշտօնակից-
ներիս վիճակը նոյնպէս քանուում:

Նստում եմ ու կանգնում, աչերս չորս արած և
ականջս սուր լարած, նայում եմ և հետաքրքրութեամբ
հետեւում եմ գիմացի երկաթեայ շրջանակներով պինդ
փակւած դրան կողմ, որից անցնում են նոյնպէս մի
երկրորդ սրահ կամ գաւիթ գիմացէ գիմաց շինւած
բանտ նկուզների կամ փոքր գնդանների կողմ:

Քայլերս սկսեցի զգուշութեամբ փոխել, բայց
վստահ չեմ յանդգնութեանս, մի գուցէ պահապան գին-
ւորի նկատողութիւնը լսեմ: Կրկնեցի անց ու դարձս
դէմ ու դէմ երկարացած սրահ:

Տեսնում եմ խոր, խաւար գնդանի այս և այն
փոքրիկ լուսամուտներից ճրագի առկայժեալ նշուզներ,
և գոցա հետ լսում եմ ախ ու վախի հառաչանքի կըց-
կտուր խօսքեր, վայերը կոտրած սրտերից:

Էլ հատաւ համբերութիւնս: Հետաքրքրւած այդ
ցաւագին մրմունջներին, դիմեցի նրբանցքի մէջ անց
ու դարձ անող զինուրին.

— Դոքա ի՞նչ կարգի մահուսներ—կալանաւոր-
ներ են, հարցըրի են. թեթեւ թէ ծանր յանցանքի տէր:

— Է, ի՞նչ էք ասում. այս կարգի կօվուչներաց
մէջ եղածները (նա ձեռք մեկնեց դէպի զնդանները)
բոլորն էլ Սասունի իսիաններից-ապստամբներից են,
լի ատելութեամբ պատասխանեց ինձ պահապանը:

— Այդ տեղն է և Մարգար վարժապետը. միայն Դամաթեան էֆէնդին է որ վայելում է Վալի վաշայի ողորմութիւն. Նորան էլ շուտով կուղարկեն Ստամբօլ՝ Սուլթանի պալատ:

Պահապանի այս ոչ միաթարական պատասխանը ինձ վրայ ազդեց ներքին մի սարսուռ. Ես սպրթնեցայ, կարծես մի կուժ սառն ջուր լցւեց գլխիս, տաք ու սառն քրտնքի մէջ ողորւած՝ դարձայ մի կողմ. Սասունի խիստներ. հա, բռնութեան դէմ բոլորովներ. այս...

Ես գիտէի, որ Տամաթեան որպէս հմուտ պրօպագանդիստ, դեռ երկու տարի առաջ մուտ էր գործել Սասունի հայ կարիճների մէջ: Նա պատրաստել էր մի թուոցիկ խումբ, և շատ անգամ ծպտեալ շրջում էր գաւառի, նահանգի այս և այն կողմ. Սասունից Բաղէջ և դարձեալ Սասուն, Գեալէ-զօղան, Դալբորիկ նրա գործելու կեղրուններն էին:

Տամաթեանը երբեմն երկում էր որպէս ջրադաշտական, որպէս վայստավաճառ և երբեմն մոկիթներում աղօթաւոր միւսիլմանների շարքին:

Երբ 1884 թ. օգոստոսի 14-ին սկսւեց Սասունի հղերական գրաման, մի բուռն լենոցի ժողովրդեան սոսկալի ջարդը, թողունք բազմաթիւ կոտորածներ և ընկած քաջեր, նոցանից բազմաթիւ հայեր և աւելի աչքի ընկած կարիճները, խիստ տանջելուց վերջ շրջաթայտապ մտան Մշոյ և Բաղէջի բանտային սոսկալի գրութեան: Բացի այս և ժամանակի զեկավարներու Տամաթեանը քսանհինդից աւելի իր զինակիցների հետ, շրջապատւած մի այրի մէջ, իրանց հրազէններով և հրանիւթերով ձերբակալաւած բերեցին Բաղէջի բանտը*):

*) Տամաթեանսի և ընկերների իրանց հրազէնների հետ միասին արջապատւին ու ձերբակալ-շղթայակառ Բաղէջ բերելու հրատարակեց «Պիթլիզ» նահանգական լրագրում նոյն 1894 թ.:

Երկար ու ձիգ հարցաքննութիւնից վերջ կերան իրանց դատավճիւն, ցկեանս աքսոր, որոնցից միայն Տամաթեանը քանի մի ամսւայ չափ առանձին մնալով թահսին վաշայի կոնսոլ, մասնաւոր հոգատարութեան տակ, ապա և նա տարւեցաւ կ. Պօլիս:

Նոյն 1884 թ. սեպտ. սկզբներին ես ականատես էի այն թշւառ արտահալած բնիկ սասունցից ժողովը դիմուցից մի հատւածին, արանց, կանանց, մատաղահաս կոյսերի և մանուկների, ողբալի գաղթականութեան, որոնք վերահաս կոտորածից աղատւած, մերկ ու բոկուն, վիրաւոր և ուժասպառ կէսը թափւեցան Բաղէջ և կէս մասը ապաստան գտան Մշոյ գաշտային գիւղերում: Բաղէջի ուսուցչական և երիտասարդներից մի խումբ սուբբ պարտաւորութիւն համարեցին իրանց այդ թշւառների ցաւն ու վիշտը մասմբ ամոքել, անմիջապէս թաղէ թաղ ընկերով հայթհայթեցին հաց, կերակուր, հագուստ և թէ զրամ, մինչև մէկ ամիս պահպաներով նոցա գրութիւնը, ապա կառավարութեան հրամանաւ վերադարձին իրանց տեղ, իրանց կործանեալ հայրենիքի աւերակաց վրայ սպալւ:

Եւ այժմս էլ՝ երևակայում եմ այն նողկալի իրականութեանց, այն արգահատելի պատկերների ուրաւկանները: Երևակայում եմ բազմաթիւ խեղանդամների, զնդակի և սրի հարւածներից բացւած լի վէրքերով, մէկ տակ շապկով կանայք և մարդիկ, մանկամարդ հարսներ, արիւնաթաթախ մանկտիներ, գտանացած մարդկութեան անգթութեանց չարչարելի զոհերն...

Ներքին վրտովմունքը ինձ ստիպում է կրկին մօտենալ պահապանին: Մի քայլ յառաջ, մի քայլ ետ եմ անում խօսքի սկսելու:

Բայց բարին այն էր, որ հերթակալ վինտը ին փոխարինեց մի ուրիշը: Բանի մի վայրկեան տեղս

լուռ ու մունջ նստելուց վերջ, վեր կացայ և քայլերս կամացով կոխեցի գարձեալ դէպի զնդանի նախագաւթի դուռն: Տակաւին ես ոչինչ շասած, մթութեան մէջ զինորը կեռելով իմ դէմքիս, ասաց՝

— Օ, բարի տեսանք տուեց իմ անունս:

— Օ, բարի տեսանք Խուրշիտ, դուք էք, պատասխանեցի ես:

Դուք այստեղ, Աստւած իմ, — զարմացած ասեց պահապանը:

— Եյս և ես այստեղ, մի գիշեր ձեզ հետ հիւր մնալու եմ և ապա գնալու եմ Վան: Մենք առ այժմ թողնենք մեզ վերաբերեալ հարցերն: լաւ է, պատեհութիւնը չկորցնենք: Եւ Խուրշիկը լինելով հայրենաշկեց, մի քանի անգամ ընկերացել էր ինձ Ռէժիփ *) մէջ ունեցածս պաշտօնավարութեան ժամանակ և Բաղդշում՝ մի երկու անգամ տեսել էի նրան կրթական տեսուչ Նուրիք բէկի մօտ: ուրեմն այս լաւ պատեհութիւն է, տխուր չենք մնալ Խուրշիտի հետ կսկսենք մեր զբոյցն անել:

Ես աւելի մօտեցայ զնդանի սրանի գուան:

— Խուրշիտ, ինդրեմ կարելի է աւելի մօտ գնալ, մտնել սրան, մօտիկից տեսնել այդ թշւառներին, ինձնից խօ կասկած չունիք:

— Կարելի է, բայց շատ զգուշ պիտի փոխես քայլերգ, զիտես այդ զալը (ակնարկելով բանտապետին) մի ուրիշն է, խիղճ չունի...:

— Վստահ կաց, կարելի է, կատուց աւելի զգուշ փոխելու եմ ոտներս, միայն թէ լսեմ և տեսնեմ դոցա աղաղակն ու վիճակը:

*) Թուրքիայում ծխախոտի մենավաճառում ընդհանրապէս ընկելով երուպական ակիխոներական ընկ, ձեռքը, կազմել է արաօնեալ կառավարութիւն «Քէմի իտարէսի» անունով:

Վստահելով ծանօթ պահապանի թոյլտուոթեան, աւելի մօտիկն պահ մի նստեցի սրանի դուռն մօտ ընկած քարէ նստարանի վրայ: Շունչս ու քիթս բոնած ապականաւծ օդի հոսանքի առաջ, նայում եմ ներքին նկուղներին, սրանի աջ ու ձախ կողմով շինւած մէկ, երկու, երեք, չորս և այլ բանտ փոքրիկ ու նեղիկ զնդաններին: Աւելի մօտիկ եմ գնում, ոհ Աստւած իմ և ինչ եմ տեսնում և ինչ աղիղորմ ձայները լսում:

Ճրագի արկայծեալ լոյսին տակ երկում են մաշւած մեռելային զէմքեր: Ընկողմած լերկ փսիաթիկ և յատակի վրայ:

b.

Պէհ, բաւական է սիրտդ մաշես, արի այստեղ ուրիշ բանի վրայ խօսնեմք ասաց ծանօթս:

— Թէ զու Քո Աստւածդ և նրա Մարգարէն կը սիրես, ներիք ինձ Խուրշիտ, թող որ իմ բաւականութիւնս առնեմ —, ինդրեցի ես. և այս լուսամուտից այն լուսամուտն եմ փոխում քայլերս:

Մղլած, բորբունած պատերով, սեակալած առաստաղներով ժանալիք զնդաններս, որնք ապականեալ օդից, աւելին խոնաւացած, իրանց ցածրիկ առաստաղներով աւելի արջերի որջերի են նմանում քան մարդկանց ընակալան լինելու: Իւրաքանչիւրին մէջ զօմ արած են 5—10 իրիւասարդ կալանաւորներ, բոլորն էլ միմեանց շղթայակապած, բոլորն էլ ջարգւած գաշնակոծումից ինչպէս կատեղի եղները. շղթաների վերջի երկու ծայրերն անցկացնելով դաներից դուրս, կզակած են սրանի անկիւններում խրած երկաթեայ ցցերի օգակների մէջ:

Լերկ և խոնաւ յատակը տեսնողը կարծում է: որ

դա լճացած մի ինչ որ վոս է եղել, և ջուրը ցամաքել ապա խոնաւ և ժամսկոտած ու բորբոժնած պատերը, վուշ, զգանքը և զգանքը էին արտայայտում: Այլտեղ էին ապրում ու շնչում, ողբում ու հառաջում մարդկային գաղանութեանց զոհ դարձած թշւառները: Այս հանգիստ բովէական դադարումից անգամ, կողքից կողք դառնում, գալարում էին մտած խոր թախծութեանց մէջ, մահի սարսուռի և կենդանի տանջարանի մէջ և միանգամ անտես և մոռացած զթոյ և ողորմութեան հայցումից: Եւ այդպէս՝ Սասունի արծիւները թափահարած ընկել էին գառագիղում: Նոցա կցկտուր եղերական ախ ու վախի ձայները, որ շշնչում էին՝ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի արհամարհական ցոյց աշխարհիս անիրաւութեանց գէմ, ակնկալեալ արդարութեան սպասելով: բայց մինչև ե՞ր...

— Ապա մի լաւ ականջ դիր և պատմիր ինձ, ինչ է միշտ բլբլում՝ այդ վարժապետը, ասաց ինձ պահապանը, որ ժամանակ երկուքս էլ միասին նայում էինք դէպ նոյն նկուղին:

— Խնդրեմ սասցէք, դա ի՞նչ վարժապետ է:

— Վարդենեսցի Մարգար վարժապետ, միթէ չը գիտես, որոր գլխով շատ բաներ անցան և այժմ իիս վճռ գրւած է, կամ պիտի կախեն և կամ էպէտիլ ըիւրէկ—ցկեանս տաժանակիր աշխատութեան:

Ես այդ գիտէի գեռ երկու տարի առաջ և կրկին ինձ յիշեցրեց ծանօթ պահապանը: Բայց կէս սարսափմար և կէս մտահոգութեամբ լի ցասումով կրկին ուզեցի տեղեկանալ վարժապետի գլխովն անյած ու դարձած արհաւերքները և նորա հերոս ընկերների անցքերն, — Մարգար վարժապետ, ինչո՞ւ, ինչ մեծ յանցանք է զործել—կրկին հետաքրքրեցի, շօշափելով պահապանի ներողամիտ կողմերն:

— Այս, նա իսկ, որ զապթիաներից մի քանիսին էլ մահամերձ վիրաւորել էր և Մշոյ Խառ գիւղում սպանեց չավուշին մի աղջկայ համար:

Մշոյ դաշտային գիւղերում տեղի ունեցած տիուր անցքերը, սկսեալ յայտնի ոճքագործ Մուսայ բէկի բննաբարութիւնից, դեռ քանի տարի առաջ Կ. Պոլոյ լրագիրները յայտարարել էին, որից ամենազլվաւորն, այդ անսպատկառ ցեղապետի և հայ կոյս Գիւլիզարի բննի առևանգումի իրարանցումն էր: Բոլորի վրէժը լուծելու և տուժելու գործը մնում էր Մարգար վարժապետին. և վարժապետը քնաթաթախ թախիծի մէջ ընկդմած իւր լոիկ և մնջիկ կոկիծներն էր մըմնջում:

— Զէ և չէ, Թուրքիայում արդարութիւն չկայ, արդարութիւն ասած լոկ հնարովի բառ է այն ապիկար մարդոց, որ անդիմագրելի զօրութեանց ձեռքից զոկելով, թակելով, գանակոնծելով, մի անձանօթ, ամենակար զօրութիւն են ստեղծել: Թուրքիայում տկարներ և անզօրները միայն նրա վրէժինդրութեան կապւակինեն:

Այստեղ աւելի խիստ սրտաշարժ էր տխուր տեսարանը: Մարգար, այն հասարակ վարժապետ մահապանացուներից չէր եղել իսկապէս: Նա ունեցել էր և անցելում իւր արժանաւորութիւնը: Մարգարի բանտարկելու և մահւան դատապարտելու խնդրը կապէ ունեցել տարիներից առաջ Մշոյ երկում տեղի ունեցած հայ և քուրդ լնդհարութների և կոյսերը բըռնարարելու հետ:

Մարգար վարժապետի ընկերներից են եղել յայտնի Արարօն և Շէկօն, որոնք նոյնպէս Մշոյ կանէ Ծաշ գիւղի մօտքի ձորերում, քրգերի և թուրք զապթիաների հետ պատահած մի անհաւասար կուռմ ընկել են քաջ հերոսի մահով:

Բայց Մարգարին սպասում էր աւելի մի եղեռական մահ...

Զարչարանք, տառապանք և տեսդական հալածանքը ոչ միայն կը մաշեցնեն մարդուս, կը տանջեն ամենազգայուն արարածն, այլ հերոս կը շինեն և՛ բանաստեղծ և՛ երգիչ—պօէտ: Մարգար վարժապետը նոյն հերոս և զգայուն հոգիներից է եղել: Ազգային ինքնաճանաչութեան ողով տոչորւած, մի քանի համախոնհերով համարձակել էր վավաշոտ այլակրօնների դէմ գուրս գալ՝ իւր տոհմական պատիւն, նամուռն պաշտպանել, հոգ չէր թէ նա կենթարկւէր հալածանքի տանջանքի և յետոյ կախաղան կը բարձրանար ի պատիւ և ի սէր իւր բնավայրի զաւակաց, անարատ կոյսերի...

Իրատէի սէնիայով—բարձրագոյն հրամանաւ—Մարգարին կախաղան բարձրացրին 1895-ի մէծ պասի մէջ: Մենք ականատես եղանք այդ հայ քաջամարտիկ հերոսի այն անիրաւ գատապարտութեան, որ Բաղէշի բերդի ստորոտում, ի ներկայութեան կառավարչական բարձր պաշտօնէից՝ կատարւեց այդ եղերական դրաման ^{*)}...

Ելի դարձայ դէպ Խուրշիտ,

— Ասացէք ինզրեմ, «Պիթլիդ» կազէթում հրատարակած լուրերը ճիշտ են Սասունի վերաբերութեամբ:

— Տամնից մէկ հազիւ, ինչ որ կատարեցին Գեաւէ գօղանի հայերի և տէրտէների գլխին, Աստւածն է խարար, անմեղ տեղ կոտորեցին խեղճերին, ոչինչ չեն գրել, բայց մի տեղ որ երկու հայ մի քօփալ քրդի է սպանել, կամ մէկ հրացան են բռնել. էնէ, իլան են անում

*) Նոյն թւականին և իսկ նոյն օր վանում կախեցին Շատուրեան Մանուկ Փուլիս նուրիի սպանման գործով, ի չըգրումը մի այլ հայ երիտասարդ նմանապէս որպէս յեղափոխական գործիչ:

(յայտարարում) — թէ այսքան միւսիլման է կոտորւել. այսքան ջարախանայ ուազմամթերք ենք վերցրել ֆէտայիներից:

— Է՛, գութում (բարեկամո), մեր մէմուրէյն (պաշտօնեայք), սկսեալ կենարոնից, Կ. Պօլսից, մինչ գաւառական քաղաքներ, երբ գործ են ունենում, քաղցած գայլերի նման ընկնում են ժողովրդի մէջ, պլոկում են յայտնի թէ գաղտնի. ովէ է մտածում: Պիթլիզը անւանի է Անատոլում (փոքր ասիական մասում), սորան «Ալթուն-Դէրէսի» — ոսկեծոր են ասում. հա Ալթուն Դէրէսի, զիտէմ, զատարկ զրպանով և պարտքով եկողը լիք զրպաններով գուրս է զնում: Եւ պահապանը յիշեց մի քանի պաշտօնէից անունները, որոնք պարտքով եկել էն, լիք զրպանով փոխել էին ուրիշ տեղ. առաջ շարունակեց.

— Եկը մեծը խօմ զիտէս. (ակնարկելով Թահսին փաշային) հազարներ է դիզեւ աւելինը ձեր հայ մէօթէրերանից (յայտնի պատւառը հայերից) և քիչ մասը մեր թուրքերից:

— Երմէնի մէսէլէսին պատճառ բռնելով, պոկել ու պոկել է: Բազգալիաններից միայն վերցրել է հազար հինգ հարիւր լիրայ. հա լիրայ եմ ասում. այսպէս էլ Մուսսի Խաչմանուկից և ուրիշներից:

— Դեռ այստեղ ոչինչ (ձեռք միկնելով դէպ ստորին զնդան) վերկի յարկումն են ձեր յայտնի հարուստ աղանները, մհծ-մհծ էֆէնդիները. իսկ մի այլ առանձին սենեակում հսկողութեան տակ է Մշոյ մուրբախէս—առաջնորդ (խօսք ներսէս վ. Կարախանեանի մասին էր, որն ևս ատարեցաւ Կ. Պօլս): Այստեղ են Խաչմանուկիաց Աւետիս, Շողիկեան, Մըսիչեան, Բագդական, Պրուեան, Խազիսագեան, Քէնտէրեան և այլ էֆէնդիները, էլ ո՞ր մէկն ասեմ: Թահսին փաշան ամեն

մէկին մէկ կովկասիթ կպցնելով, միջու մարդկանց ձեռքուլ դեղին ոսկիները կլորում է իւր զրտան, կէմն ի հարկէ իրեն, և կէմն բէօջէկը աշխներին (կենտրոնականաց): Եւ այսպէս և այնպէս միլէթ—ժողովուրդ—իզուր տանչում է:

Ի գէպ է զուեստիւք յիշել գեր, ներսէս ծ. փ. Կարախանեանի *) լուրջ գիտակցութիւնն, որն այդ ներ օրերին համբերութեամբ և խիստ զգուշաւոր կերպով տարաւ ու տեղաց:

Միամուլթիւն կինէր, եթէ ասէինք, որ Բաղէշի գիտակ երիտասարդութեան մէջ էլ հայկական-ազատագրական հարցէ վերաբերութեամբ շարժումները չէր երևում: Եւր Սասունից Մուշ, Մուշից Բուլանը, Արձկէ, Խլաթ և անտի Բաղէշ արձագանք պիտի տային քաջ լեռնցիների շարժում, բայց խուլ և լոիկ էր այդ քողովը, պատճառը տեղական աննպաստ պայմաններն էին:

Թահսին փաշան և իւր արբանեակները աչքերնին սուր սրած առիթ էին փնտում: Մի տեսակ աշքածակ տղբուկի նման ծծեցին Բաղէշի հասարակութեան շատերին: Խորամանկ պաստօնների նման, նորա նախ շօշափում էին մտքեր, հակառակ պարագային՝ ապա ուղարկում էին մուլթ տուն—զնդան:

Ինչ որ պահապան զավթիան յիշեց ու խոստովանեց ինձ աւելի մտերմարար, այդ բոլորը և ինձ վահապանի էին: Բայց որ այժմ և ես նոյն զնդանում աշխանատես եմ և մօտիկ իրազեկ եմ լինում, աւելի փառակից են և ապագային օգտակար:

*) Գեր. Ներսէս գ. Կարախանեան ազատելով արսորից 1909 թ. հոկտ. 25-ին ո. Էջմիածնում վէճ, հայրապետ Մատթէոս Բ. իզմիրիանից ի միասին Կարապիտ, Մեսրով և Միթթար վարդապետների հալիսկոպս ձեռնադրեց:

Ծանօթիս հերթն էլ վերջացաւ և մինք կարձ կապեցինք: Նորան յաջորդեց մի այլ քուրտ ոստիկան, որից բան հանկանալ անկարելի էր, և ես կամացուկ քաշեցայ տեղա:

1894 թ. օգոստոսի 14-ից, Սասունի կոտորածից դեռ առաջ, մինչ հոկտ. 15 յաջորդ 1895 թւական՝ մինչև Բաղէշի կոտորածը հայկական ամեն գաւառներում թուրքական բանտերը նոյն և Բաղէշի զնդան խիստ առ խիստ լցած էին ամեն դասակարգի հայերով: Հոդեսրականների և վարժապետների թիւը մէկ երրորդն էր կազմում: Դոքա բոլորը ամբաստանւած էին քաղաքական խնդրով: «Փոլիթիկայ մատաէսին»-ը՝ եղիլ էր թուրք պաշտօնէից մատիք փաթաթան, բայց ամենից աւելին ես կարծում եմ, որ Բաղէշի զնդանը պիտի լինէր ապականւածն, սարսափելին և զարհուրելի տանչանսարան: Այս, սակալի էր Բաղէշի զնդան խիր տեսակին մէջ. աւելի սուսկալին՝ նոցա վարիչներ, այդ պատճառի գահինները:

Եթէ լուսաւորեալ երկիրներում մտածում են և ծրագրում բանտային և բանտարկելոց դրութիւնը բարուքելու, մարդկութեան և օբէնքին դէմ մեղանչողներին յուրղութիւն բերելու, ընդհակառակն Պիթլիզի ուտիկանութիւնը մտածում էր այդ վիճակը աւելի անտանելի գարճնելու, բարբարոսական միտումներով:

Եւ ինչ աւելի կապատէր այգավիսի մի անտակտ, անպայման յոտի վարչութիւնից, ուր «օրէնք բանութիւն մեր լիցին» էր, և այդպէս էլ կշարունակէր գեռ երկար ժամանակ:

նորոյ զի՞ն և սպանդիվ Զ. անդամ ավելան և
համբաւան այսու իս վն բարբառաւ մասն ուղարքաց
Իմ վիճակիս այն յուզւած դրութիւնից, այդ ամ-
բողջ գիշերը ևս անցկացրի անքուն և անհանգիստ,
ընկղմած խորին մտմտունքի մէջ, վրդովւած ոչ միայն
իմ անձնականին պատահած այն զրապարտիչ անցրով,
այլ որ աւելին էր՝ ընդհանուր դրութիւնից: Լսելով և
տեսնելով այն բոլոր բարբարոսական խժդութիւնը և
ընչափաղց թուրք մէմնորէլի՛—պաշտօնէից պատճա-
ռարանեալ անիրաւութիւնները չէի կարող զզացմունքս
խեղդել, միայն այսու՝ որ մտմտում էի միշտ մի և
նոյնը «ոհ, դուք բարբարոս քիւրդեր, յոոի վարչու-
թեան կրօնամոլ թուրքեր, մինչև երբ»...

Առանձնացած մի կողմ, կողքից կողք էի գառ-
նում: Ցանկալի էր ինձ գէթ մի քանի վայրկեան գո-
նեա մոռանալ վշտերս, սակայն այդ՝ չէր յաջողուում,
քունը մօտ չէր գալիս:

Խորանդր ձորակին վրայ բացւած պատուհանից
երեալ սկսեց արշալուսի առաջին վիվլացող լոյս, իւր
հետ բերելով ինչպէս արար աշխարհին, այսպէս և ինձ
կարծես՝ նոր մի ոգեսրիչ զօրութիւն: Եկեղեցիների
զանգակների քաղցրահնչին ձայն մի կողմէից, մօլլան-
ների, մուսավինների «Ալահ աքարի» ոմանց խոպոտ
և ոմանց զիւ ձայները միւս կողմէից, իրանց սովորա-
կան աններդաշնակութեամբ աւետելու եկան լուսոյ և
առաւտեան գալուստը:

Զնդանի այն մասում, ուր գամւած էին Սասունի
կալանաւորները այլ ևս ոչ մի ձայն, ոչ մի շնչիւն:

Շարժողութեան մէջ էին միայն մուսլիման բան-
տարկեաները պատրաստելու, ազօթելու, ընթըելու և
կրկին քնելու:

Իրանց կրօնակից ընկերների հետ արթնացան և

իմ երեք ընկեր կալանաւորները, գեռ բոլորովին չը
հագնւած՝ շաապեցին և նորա կատարել շէվաղի ապ-
տէսթն—արշալուսի լուացումն:

— Հըմ, ինչո՞ւ չես քներ շարզջի—երգիչ, ուշա-
գրութիւնը ինձ վրայ դարձնելով՝ հարցրեց քուրդ ցե-
ղապետը:

— Թունս չի գալիս, աղա ցեղապետ, մտածում
եմ, որ երկար ճանապարհ կայ գնալու և ևս պատրաս-
տութիւն չունեմ:

— Մի մտածիր, ևս էլ քեզ պէս էի երբ մտայ
այս քամբախ զնդան, այժմ սովորել եմ, կուզի հինգ
տարի էլ պահեն, ոչինչ չեն տեսնի:

Ցեղապետ, սափրիչ և դրամանենգ էֆէնտին
կատարելով իրանց ծէսն, ընթրելով՝ կրկին ընկողմնե-
ցան, կրկին քնեցին:

Զնդանի գոները կրկին ամբագոյնս կրղմուեցան,
և կրկին տիրեց խոր լուութիւն:

Ես էլ ընկողմնեցայ, կամայ թէ ակամայ աչերս
փակեցի, բայց ի՞նչ քուն, ի՞նչ հանգիստ ցնորք թէ
անուրջք ինձ շրջապատեցին: Տատանում եմ կողքից
կողք, վերջապէս հոգեկան սաստիկ տանջելուց էր
թէ ահհանգստութիւնից՝ չգիտեմ, միայն քնել եմ: Իմ
մտածմունքիս բոլոր առարկան ձանապարհ ընկնելս է:
առաւտեան ո՞ւ ժամին, որոց հետ և ի՞նչ պատրաս-
տութեամբ:

Ինձ պատահել էր տեսնել շատ անգամ կալանա-
ւորների պատրաստութիւնն, նոցա փոխագրութիւնը
տեղից աեղ, խիստ հսկողութեան տակ և շատերին
շարիշար շղթայակապ... Տիսուր իրականութեանց հետ
և տիսուր երևակայութիւն... կամայ թէ ակամայ հա-
մակերպելու էինք, մեղ յանձնելով զիւլածին, ինչ որ
լինելու էր թող լինէր, և մենք խօ աւելի թանգ չէինք

գնահատում մեղ, քան այն պատւական մարտիկները...:

Բամէզանի շէրիֆի—ծոմի ամիսը ընդհանրապէս միւսլիման աշխարհում, թէ պաշտամարանքի, թէ զբւարձութեանց և թէ լաւ կերռուխումի, քէֆ անելու մի որոշ նշանակութիւն ունի: Նամազ, նիեազ—աղօթք և խնդրածք—իւր կարգին, զուարձութիւն, քէֆ, կեր ու խում իւր կարգին, ամեն ինչ ամենայն յդփութեամբ՝ կայ ու կայ: Սկսեալ հասարակ, միջին և հարուստ դասակարգեից, ամեն մի միւսլիման, ըստ շրջանի և կարողութեան, պարտքով թէ խարջով, անհրաժեշտ է կատարել. և զոցա հետ թունդ վերաբերմունք դէպ ոչ մահմեղականներ, որոց ենէ ուղենան, հարիւր անդամ էլ հայնոյեն և նախատեն, նէրելի է, որովհետեւ պատասխանատուն ըէմէզանի շնչուիցն է, օրօջն է—ծոմապահութիւնը:

Գիշերային զւարձութեանց մէջ յդփացած միւսլիմանը քնում է արշալուսին և արթնանում—շատերը ցերեկւայ ժամի 11—12-ին: Սորա աւելի ժամփուկ սովորութիւնը կդանես կառ. պաշտօնէից մէջ. սոցա սկսած գործն էլ մի բանի նման չէ. Աստւած մի արացէ, հայ-քրիստոնեան ըէմէզան ամսի մէջ գործ ունենայ կառափարութեան դուռ....:

Հաղիւ թէ մի թեթե քաղցր քունը տուել էր ինձ, յանկարծ զապթիաններից մէկը արթնացրեց ինձ առաւտաեան ժամի 10-ին:

—Վէր կաց, վարժապիտ, կանչւած ես զապթիայից—ոստիկանութիւնից—, դրսում քեզ սպասում են ընկերներդ:

Այս զեկուցումը որքան էլ անմխիթարական լինը ինձ համար, բայց և այնպէս ուներ իւր մխիթարական կողմն էլ: Օրհնեալ է Աստւած, չէ՞ որ կազատ-

մեմ այս ապականեալ տեղից, լոյս աշխարհ կընկնեմ և հայրենիքս կերթամ:

Ներկայանալով հերթակալ ոստիկան—հարիւրապետին, ապա յանձնուեցայ բակում պատրաստի կանգնած չորս ձիաւոր չէրքէզ ոստիկանների: Նայում եմ չորս կողմոն ոչ մի հայ, ոչ էլ ծանօթ ոք: Այլ ևս ինձ միջոց չտւին երկու խօսք փոխանակելու, ինչդեւու ճանապարհի թեթև պատրաստութեան համար:

— Այժմ ճանապարհ ընկէք. ձեր ետկից կգայ ամեն ինչ—հրամայեց ոստիկան-հարիւրապետը ակնարկելով՝ չէրքէզներին....:

— Դէ հայդա, արքատաշ—օն ընկեր—գնանք— ասաց չէրքէզների գլխաւորը, որին Արսան բէկ կամ շատուշ էլն կանչում.

Այս, զնանք, ուրիշ ոչինչ. և ինձ տեսայ չորս չէրքէզ ձիաւորների մէջ, երկուքը առաջից և ետեկցս և երկուքը կողքերից: Պահ մի լուս և մունջ շարունակեցինք մեր ուղինը:

Ապերախտութիւն կլինէր ինձ, եթէ չիշեմ Բաղչի հոգաբարձութեան, մասնաւորապէս Ամէտեան *) պ. Յովսէփի, իմ ճանապարհի պէտքերն հոգալու արած շատապղական պատրաստութիւն, որն ի վերջոյ իմացայ, սակայն ոստիկանութիւնը արգելք է լինում և ետ է գարձնում աւելորդ համարելով:

Զեմ յիշում օրւայ թիւը, սակայն գիտեմ, որ այդ օր՝ 1894 թ. աւագ հինգշաբթին էր: Վերսկից սաստիկ ձիւնախառն անձրեւ և ներքեմից լճացած ցեխն ու ձիւ-

*) Ամէտեան պ. Յովսէփ մի պատւական երխտասարդ մարդ, հասարակական գործիչ, յայտնի վաճառական առնմից էր: 1895թ. հոկտ. 15-ին Բաղչի կոտրածին չարաշար նահատակւում է ակղական թուրք սրիկաններից, որի մահը ընդհանուր սուզ է պատճառում շատ շատերին:

Նը ինձ անհանգիստ էին անում: Անցնելով քաղաքի նեղ ու խոտորնակ փողոցներից, համանք թաղագլուխ կոչւած տեղ. կանգնեցինք մի երկու բռպէաչափ: Շատերի, անցնող դարձողի ուշադրութիւնը իմ կողմն էր: Երկեւ ես՝ շատ յանցաւոր էի. կալանաւոր...

Չերեզների գլխաւորը նկատեց իմ դրութիւնն ուքա ձիով, իսկ ես յետուն, ինչպէս կարելի էր: Նա զգաց ինչ որ մի մարդասիրական ասեմ թէ քաղաքավարական գործ կատարել և կատարեց.

Արի դութում, արի իմ ձիու գաւակն, սարսարին հանդիպի ոչ, բայց մարդը մարդուն՝ ամեն ժամանակ—ասելով՝ կանգնեցրեց ձին և ես էլ գտայ իմ հանգիստն:

Ճաշից վերջ կտրելով Ռահվանի անձրեց և ձիւնից ճապաղած դժւարանց ուղին, հասանք առաջին պահականոց, Ռահվան-խան, առաջին իջևան:

Դրան առաջն կանգնած մի պահակ զալթիա, տեսնելով իմ դրութիւնս, իսկոյն և եթ նկատեց նդուածը...

— Հըմ, բու դա անյարդանուր—այս և ինոցանէ է, ասելով ինձ հրաւիրեց խոնաւ մի մութ սենեակ:

Վերջին տարիներում երկրի զանազան մասերում ընկած պահակները, կայարանների հսկող պաշտօնեայք այնքան ընդունել և ծանօթացել էին հայ կալանաւորների հարցով, որ առանց կասկածելու ամեն հայ բանտարկեալին նոքա ֆէլայի կամ միւզիր—անձնանւէր, կասկածելի էին կարծում և վարում էին աւելի խիստ կերպով:

Ռահ—վան, կամ վանուղի, Բաղէշից մինչև Դատաւան հայ գիւղը, առաջին բանուկ նաւահանգիստն է վանայ ծովին: Դատաւանից մինչև Աւանց գիւղ—նաւահանգիստ համանելու ծովային ճանապարհով, վեց ժամ

է. բայց մենք կտրելու էինք ծովի հարաւային եզերագիծն. անցնելու էինք կարձկան կամ վերին Ռշտունեաց անտառներով և կապաններով, յանձնելու էի կարձկանի ոստիկանութեան:

Կրկին տեղացող անձրեց բոլորս էլ եղել էինք տուղ-մուզ, մինչև շապիկ թրջւած, մանաւանդ ես, որ հազիս չունէի վերարկու և կրկնակօշիկներս աւելի էին անհանգստացնում ինձ:

— Այս չեղաւ. իջնենք Դատաւան և մի քիչ հանգստանանք—ասաց Արսլան բէկ և ձիւորներից մինը ուղարկեց գիւղ՝ պատրաստութիւն տեսնելու:

Կէս ժամից վերջ՝ մենք Դատաւանում, գիւղապետի սենեակում մեր հանգիստն առած վայելում էինք պատրաստած սեղանը:

— Ասուած շէն ու պայծառ պահէ հայ գիւղացու շէնը, ասաց չափուշ—բայց, բայց չգիտեմ ինչ ասեմ... Ինչպէս շատերը նոյն և չէրքէզները քանից կրկնեցին հայ գիւղացու հիւրասիրութիւն: Բայց և այնպէս՝ ժամանակի տիրող աննպաստ պայմանները օգնում էին և ամենաստոր պաշտօնէին անգամ, խէթիւ նայել դէպ հայ մարդ:

Գիւղապետը նկատելով իմ դրութիւնը և կօշիկներիս, արգահատեց. Էլ չկարողացաւ զսպել իւր զգացումն:

— Այդպէս չեղնի պարոն. Էդ մլա չես կարող չորս օրւայ ճամբայ էրթալ. քզիկ պէտքն ա մի չուխտ տրեխ և մի չուխտ հաստ պճեր (գուլբայ), թէ ոչ օմներդ կպաղին և գու խեղճ ես:

Հնազանգեցի բարի գիւղապետի խորհրդին. հագայ հաստ գուլպաներ և տրեխներ: Պատրաստւեցինք ընկնել ճանապարհ: Բայց առաջին անգամն էր՝ որ բոլոր ճանապարհորդութեանս մէջ հազնում եմ տրեխ-

ները և ի՞նչ լաւ բան է եղեր. ի՞նչպիսի հանգստութիւն...

Շնորհակալութիւն յայտնելով Դատուանի տանուտէրոջ, ընկանք ուղի, և վերջալուսի ճառագայթների հետ, նոյն օր մտանք Ալմալու կամ Խնձորիկ հայ գիւղ:

Այս տուն, ուր մեղ հիւր տեխն, շատ անգամ ընդունել էր ինձպէմներին և այդ էր պատճառ, որ գուան չորս բոլորը լեցեց հետաքրքիր բազմութիւն. և ինձ թւում էր, որ զապթիւններից կամկածելով տեղացի երիտասարդներից, հրամայեցին չորս պահապան, ևս աւելացնել, որոնք ճերթով պահեցին այդ գիշերը:

— Այժմ կարող էք հանգիստ քնիլ — ասաց Արսլան բէկը — ոչինչ մի մտածէք, վաղ երեկոյեան կհասնինք ձեր սահման, Եղեկիս *):

Ընթելուց վերջ, չաւուշը առաւ ինձանից իմ ժամացոյցս. չգիտեմ թէ ինչ մտքով. արդեօք որպէս գրաւական, մի գուցէ, գիւղի երիտասարդները ինձ փախցնէին, կամ որպէս մի պարզե իւրացնելու... Առանց այլայտութեան և որոշ մաքերի ևս յանձնեցի ժամացոյցս և ընկողմնեցայ լերկ թաղիքի վրայ: Նախորդ գիշերւայ ոչ անհանգստութիւն, ոչ յուզմունք և ոչ մտատանջութիւն ինձ շխանգարեցին առնել բաւականութիւնս մինչև առաւօտեան լուսաբացին:

Երկրորդ առաւօտեան շուտով ճանապարհ ընկանք և գեռ ճաշը չեղած մտանք Եղեկիս, կարձկան գաւառակի կինտրոնատեղ:

Կարձկան գաւառ կամ Վերին Ռշտունիք, որպէս համեղ պատառ միշտ կեղեքւած է թէ Վանալ և թէ

*) Եղեկիս հայ գիւղը կարձկան գաւառակի կեդրանն է, ուր նստում է գաւառապետ. չորս կողմեց չըջապառւած է կոյս անտառներով, առատաբուղի աղբիւրներով:

Բաղէշի թուրք պաշտօնեաներից: Ազգաբնակութիւնը գլւած այդ կերպի կամայական զուլումներից, քանից բողոքելով, վերջ հաստատւեց Վանայ կուսակալութեան մէջ:

Արսլան բէկը ինձ վերաբերեալ թզթերն յանձնելով տեղայն ոստիկան-հարթւրապետին, նոյն երեկոյեան մեկնեց իւրայիններով:

— Գնաք բարով չափուշ. ձեր արած լաւութիւնը չեմ մոռանալ — եղաւ իմ վերջին խօսքը:

Այս մոռանալու չեմ. երբ երևակայում եմ և մինչեւ այսօր, եթէ չէրքէլ ոստիկանը ինձ չառնէր իւր ձիու գաւակն, ի՞նչ պիտի մնէր իմ վիճակը, կամ ըրդթայակապ քաշ տային ինձ ետևներից... բայց ինչպէս սուսմ են, այդ օր ես բարի մավթի պատուանեցայ:

Եղեկիսում ես ունէի ծանօթ-հայրենակից պաշտօնեաներ, որոնցից մինն էր գաւառի գանձական Բէքըը էֆէնդին, որոյ հետ մի քանի տարի առաջ պաշտօն էի ունեցել Քաջքերունեանց երկրում, Արճէշում: Բէքըը էֆէնդին երաշխաւորելով ոստիկան-հարթւրապետին՝ ինձ հիւրասիրեց: Բայց զարմանք, ես դեռ ոչինչ չասած նա յիշեց:

— Ես գիտեմ, երգեր ես երգել:

— Միայն դորա համմթ:

— Այս, հէնց դրա համար:

— Տէք Աստւած, միթէ երգերից էլ են վախենում մարդիկ: Էլ ոչինչ չասելով, անցանք սովորական խօսակցութեանց:

Յաջորդ առաւօտ ընդունելով թուրք ծանօթիս պատրաստած անուշակի սուրճն և նախաճաշն, չորս չէրքէղ ձիաւորների փոխարէն, յանձնեցայ միայն մի լազ չափուշ Ապտուլային:

Տէք Աստւած, թէկ փորձանքները զլիսիցս պա-

կաս չեն, բայց ուր էլ որ գնամք, ծանօթներն էլ պակաս չեն: Եւ այդպէս՝ Ապտուլլան չափուշին ծանօթացել եմ դեռ 1883 թւականից, որ ժամանակ (արձակուրդին) Վանից անցել եմ Իգդիր—սահմանագլուխ և անգամ մի էլ Վանայ անգլիական գօնսիւլ պ. Գլեյթօնի հետ արածս ճամբորդութեան ժամանակը, ուղեկցում էր մեզ որպէս պահապան զինուր: Ուրիմն ոչ մի բռնութիւն և նեղութիւն մեզ վրայ:

Երկու օրից վերջ մենք մտանք Վան. Յարութեան դատիկ երկուշարթին, իսկոյն և եթ ներկայացանք նախ Վանայ ոստիկանապետին և անտի լընդհանուր դատախազին *):

— Հըմ, եկամբ, ընկերներդ քեզ են սպասում—ասաց դատախազ իւր առաջին հարցով և խնդրոյն վերաբերեալ մի քանի բանաւոր հարցեր տալուց վերջ, ակնարկեց երկու ոստիկանների, և հինգ րոպէց վերջ ես արդէն կենտրոնական բանա՛ ընկերներիս մօտն էի:

— Օ՛, օ՛ բարով, բարով—չորս կողմից լսեցան ծանօթ ձայները:

— Մէկը դու էիր պակաս—ասաց չարաճը և. Սօլախեանց, հոգաբարձութեան անդամներից մինը:

— Ո՞չ բարով ոչ խէրով. տօ տնաքանդներ, մի լաւ տեղ էք ընկել, որ ինձ էլ բարով-խէրով էք անում:

Սկսեց ընդհանուր ծիծաղ:

«Ման ընկերով հարսանիք է», ասում է առածը: Միամիտները կարծում էին, որ իմ ներկայութեամբս գործը կվերջանայ, ի՞նչ ասել կուզի, և շուտով էլ կազատուէլինք...

*) Օսմանեան դատարանական կազմը ունի հետեւալ զըլիաւոր բաժանմունք. 1. միաթէնթիկ-հարցաքննիչ. 2. բիտաեէթ-նախնական. 3. իսթինափ-վերաբննութեան. 4. թէմիդ-վճռաբեկ ատեաններ. այս վերջինս Կ. Պօլսումն է միայն:

Սպասենք և տեսնենք, որքան ուժ ունին մերայինք կամ մեր վարձւած փաստաբանները: Կամ Երբ պիտի կակդի կամ կակդեցնեն Բահրի փաշայի սէրթ քնաւորութիւնը...:

Է.

Ինչպէս արդէն էլ յիշեցի, չորրորդ անգամն է՝ որ ես ընկնում եմ Վանայ բանտ: Ինձ վրայ չթողուց այն տպաւորութիւնը, որպիսին ես զգացի Բաղէշի զնդանում և այն էլ միայն մի գիշեր:

Այստեղ՝ այս առաջին գիշերը մենք անցկացրինք, այս երեք ամսեայ ընթացքում՝ մեր բոլորին գլուխ անցկացած դէպքերն կրկնելով:

Առաւոտեան ժամի 11-ին կրկին կանչւեցայ ընդհանուր դատախազից: Մեր ընկերների, բոլորի հարցաքննութիւնը վերջացրել էին և գործքերը յանձնուած էր պատկանեալ տեղ. նախ նախնական ապա վերաքննութեան ատենին: Բահրի փաշան խիստ էր զայրացել մեր գէմ...:

Դատախազը Բաղէշի դատախազին տւածս հարցաքննութեան թղթերն ծրարւած ամլոքի միջից դուրս հանելով, կրկին աչքէ անցունելով, վերէն վար ինձ մի լաւ դիտելուց վերջ՝ ասաց.

— Ճշմարիտն ասացէք. գուք ի՞նչ ժողովներ էք ունեցել ի՞նչ նպատակաւ, և գուք՝ մասնաւորապէս ի՞նչ երգեր ես սովորեցրել, այս երեք հարցիս տէք կտրուկ պատասխան և ապա իշարին կնայենք, շուտով կվերջացնենք ձեր գործը:

— Եֆէնդի, եթէ ճշմարիտն էք ուղում լսել, այս է: Այս մենք ուսուցչական խմբով և հոգաբարձութիւնը ունեցել ենք մի միայն մանկավարժական ժողովները

ուսումնարանի և ուսանողների համար: Իմ սովորացրած երգերը եղել են մանկական երգեր, մանուկների համար: և թող զայտ՝ սովորեցրել եմ նաև «Պաթիշահանչայ մախսու»—սուլթանին յատուկ թուրքերէն երգեր, ուրիշ ոչինչ—եղաւ իմ վերջին և կտրական պատասխանը:

Թէ որ տեղից էր ծագում առել մեր ձերբակալութիւնը և խուզարկութիւնը, ի դէմ է յիշել մի հարսկանցի ակնարկով:

Մեր և ընկերներիս ձերբակալութիւնից երեք տամս առաջ, Կ. Պոլում հրատարակւած հայ թերթերից միոյն մէջ, Վանից ուղարկւած մի թղթակցութիւն է երևում, որուն մէջ Խիստ կծու ակնարկութիւններ է պարունակում Վանայ կառ. պաշտօնէից մասին: Ինչպէս ամեն տեղ և վանում, դեռ փօշտատան քննուում և թարգմանուում էին նամակներ և թերթեր, հետամուտ են լինում գտնել թղթակիցը. Երկար ու բարակ պրապերուց վերջ կատկածը յանուում է Մ. Մալոհանցի վրայ:

Պ. Մալոհանց հոգաբարձութեան ատենազպիր մելով հանգերձ, բաւականին աչքի ընկնող երիտասարդներից մինն էր: Անակնկալս ոստիկանութիւնը խուժում է յիշեալին տուն, հաւաքում է ի թիւս անվաս թղթերի և թերթերի և հոգաբարձութեան արձանագրութեան մատեանը: Եւ մատեանում ի՞նչ պիտի լինէր գրւած, անշուշտ ժողովների և ուսուցիչների վրայ գասերը բաժանելու օրագրութիւնները և որոշումները...

Բայց կառ. և մասնաւորապէս ժամանակի կուսակալ Բահրի Փաշան, որոնք ամեն հոգմից շարժուում և ամեն բանից դողում էին, ինչպին այլ կերպարանք տեին:

Իմ վերջնական պատասխանը տալով դատախազին, կրկին տարւեցայ բանտ՝ ընկերներիս մօտ:

Վանայ կենարոնական բանտ բաղդատմամբ Բարդէշի զնդանին, արքայութիւն պիտի համարել:

Այդ նոր պատժարան շինեցաւ 1886 թ. բաւարար յատակագծով, բաժանաւած երեք գլխաւոր մասի. մեծ-կակ լուսամուճներով, տախտակամած յատակով և մի քանի յարմարութիւններով, որոնք բացակայում էին Բաղդէշի զնդանից:

Առաջին մասում, ալիրում էին բանտապետ, ոտտիկան հարիւրապետ իրանց պահակ խմբով, որոց մօտիկ ունեալիներում բանտարկում էին յանցաւոր պաշտօնեաններ և մի կարգ քուրտ ցեղապետները, որոնցից օգտում էին և բորբը...:

Երկրորդ մասում՝ թեթև յանցաւորներ, ուր և զան թուրքերի համար ազօթատուն և հայոց եկեղեցի:

Երրորդ մասում, որին և զնդան էին կոչում, ամենախիստ հսկողութեամբ պահում էին եղենանգործներ և քաղաքական յանցաւորներ, որոնց թւումն էինք և մենք ուսուցիչներով և պատելի հոգաբարձուներով: Ներքին զնդանին կից կար մի ընդարձակ հնեմելիք, որից օգտում էին կալանաւորները պահ գուրս գալիս արգելաբաններից իրարու վշտերով զրադած:

Վանայ բանտումն էլ տեսնում եմ բազմաթիւ հայ երիտասարդներ, պատւական տանուտէրներ, պատւատոր քաղաքացիք և գիւղացիք, բոլորն էլ ծանօթինդրով, «Փոլիթիկայ մատէսընդան» քաղաքական հարցով բանտարկւած, զոհ եղած այս և այն մատնիչի, զրպարտիչի լարած որոդայթիներին:

Ի՞նչ տիսուր և վշտալի օրեր անցկացրիր և գեռ

անցկացնում ես, թշտառ և ողբալի ժողովուրդ թուրքահայստանի:

«Յամենայն հողմոյ շարժի և յամենայն իրաց դողայ»:

Այդ զրութեան մէջ էին գտնւում տեղական ոստիկանական կառավարութիւնները: Մի ինչ որ չնչին պատահար, մի ինչ որ սրբկայի տւած զեկոցումը պատճառ բռնելով անակնկալս շրջապատում էին մի ամեռղ թաղ. մանրազննին խուզարկում էին աշխարքից բէխարար ծերունիներն անգամ. ձերբակալում էին աչքի ընկնող երիտասարդ-պատանիներին. ենթարկերով ծանր պատասխանատութեանց, որոնցից ազատելու համար՝ ամիսներ և տարիները պէտք էին և ինչ գժւարութեամբ և քանի քանի տասնեակ միրաները կաշառելով...

Այդպէս էր և զրութիւնը մասնաւորապէս վասպուրականի, կարսոյ, Բաղէշի, Փոքր Հայոց հայկ. վաւուների և կենտրոնական քաղաքների հայ ժողովը գեան, աւելի հայ երիտասարդների. ոչ ոք իւր անձին, իւր կայքին տէրն էր:

Թէպէտ և Վանայ պիտայէթի—նախնական—գաւառանը սկզբից մեր գործին վատ հետեանք էին տւել, պատժական օրինաց քանի երրորդ յօդւածների համաձայն, բայց չնորհիւ ազդեցիկ միջոցների և փաստաբան-պաշտպանների, մեղմացնելով կուսակալ Բահրի փաշայի զայրոյթը, բարի եւք ունեցաւ:

Վերաքննութեան ատեանը անհետեանք թողով, անպարտ արձակեց մեզ, ընկերներս երեք ամիս, և ես՝ քառասուն օր բանտարկւելուց վերջ: Մեր ազատութեան գլխաւոր միջնորդը, ձշմարիտն ասած, եղաւ

ժամանակի առաջնորդ գեր, Պօղոս եպիսկոպոս Մելիքեանց:

Մեր վերջի դատալարութեան և ազատելու օրը բաւականին հետաքրքիր բազմութիւնը սպասում էր վախճանին: Բահրի փաշան, չգիտեմ թէ ինչ նպատակաւ էր, մեզ բոլորիս կանչելով իւր ներկայութեան ինչ որ մի քանի խրատական խօսքեր խօսեց: Ելի բարի սհաթի հանդիպեցանք....

Փաշան *) Վրաստանի մի ազնւական տոհմից էր: Նրա նախնիքը մահմեղականութիւն ընդունել էին հազիւ երկու դար առաջ: Նորա ընտանեկան լիզուն զուտ վրացերէն լինելով, ներքին սպասաւորները և աղախիններն էլ խօսում էին վրացերէն:

Մանկութիւնից նա տարելով Կ. Պօլիս, մտնելով զինորական դպրոց, հասել էր գեներալ նահանգապետութեան պաշտօնի: Նա իւր ֆանատիկ բարբարոսութեան հետ և ունէր ասպետական վեհանձնութիւն, որից կարելի էր օգտել պատեհ ժամանակին:

Վերջապէս՝ մենք ազատեցանք, բայց մեր սիրելի Մ. Մալօեանը քաշեց այդ քառասունքը մօտ տարի ու կէս և հազիւ չնորհիւ Օրմանեան և պատրիարքի արած միջնորդութեան և նա ազատեց:

Ազատելով այդ տարապարտուց և այս չորրորդ անգամի բանտարկութիւնից, հազիւ կարողացայ մնալ վան, երկու շաբաթ: Ես գնասել էի թէ նիւթապէս և թէ բարոյապէս:

Ինձ անյապաղ սպասում էին Բաղէշում պաշտօնակիցներս և հոգաբարձութիւնը, որոնք ոչ սակաւ հետաքրքրւած էին մեր գործով:

*) Բահրի փաշան պաշտօնանկ լինելով Կ. Պօլիս գնալիս Տրապիզոնում մահափորձի ենթարկւելով, անպէս վիրաւորւած մտաւ մայրաքաղաք. սրան յաջորդեց նազամ փաշան 1895 թւին:

1894 թ. մայիսի վերջերում կը կի՞ն շարունակում էի պաշտօնս. նոյն ուսուցչական կազմով մնացի՞նք մինչև 1895 թ. յունիսի վերջ

Մեծ եղաւ ուրախութիւնը այն բոլոր ծանօթներիս, որոց անակնկալս պատահում էի: Գուցէ և շատերը ինձ այլ ևս անդարձ էին համարում կամ մտածում էին ախուր վախճանի...:

Հ.

Սաստինի 1894 թ. օգոստոս 14-ի կոտորածը իւր հետ բերեց հայոց վերաբերեալ մի շատ բարդ ինդիրներ և խարուսիկ յոյսերը: Այն բազմադիմի աւերածութիւնից և արիւնեղութիւնից վերջ, կոտորածի վայրն շտապեցին, հաւաքեցան մեծ պետութիւնների ներկաշտապեցին, հաւաքեցան մեծ պատութիւնների արելաշայցիցիներ, մասնաւորապէս Անդիայի և Ռուսաց: Նոքա անձամբ ականատես լինելով լեռնցի մի բուռն ժողովրդեան չար կրելութիւններին, կտտաման սպանութեանց, քննեցին, արձանագրեցին, յայտնեցին և յայտարարեցին իրանց պաշտօնական ցուցմունք: Դըղրդեցին դիմումակների դիւնանատներ, որից և օգտելով եւրոպացի շատ հայասէր հսկութեաները սկսեցին էլ այնունետե աւելի բարձրակոչ աղաղակել և պահանջել իրաւոնք և արդարութիւն...: Բայց այդ բոլորը նաև Սաստինի վերաբերութեամբ, անցաւ յումպէտու: Մարդարան հազիւ արժան համարեց Մուշ և Բագէշ քաղաքներում ունենալ անդիական և սուսական գօնսիւները և ուրիշ ոչինչ...:

Մէջ աեղ ընկաւ բարենորոգութիւնների հարցը: Իսչպէս հայկական ամեն նահանգներում լուսում էր Բերլինի 61-րդ յօդեածի բարենորոգութիւնների գործադրութեան աւետեաց ձայները, նոյն և լուսում էր

Բաղէշում: Մինչև իսկ թուրքեր, պաշտօնական անձինք, նոյն իսկ խորամանկ թահսին փաշան իրանց մօտիկ հայ աղաներին չնորհաւորում էին հայկական եօթը վիլայէթներին սուլթանից շնորհւած ծրագիրները, որոց պատճէններն տեսնելու էլ բախտ ունեցանք: Եւ գա ինչ երազ, ինչ բարի երեակայութիւններ էին. բայց թէ երազն ի բարին կատարւէր, սնութի յուսախարութիւնք...:

Այս, եղաւ մի բան, սաստինցիների արեան գնոյն փոխարինելու: Ծնորհիւ «իրատէի սէնիէի» բարձրագոյն հրամանաւ, փոլիթիկայ մատաէսընտէն գոլայի—քաղաքական հարցի վերաբերութեամբ—բազմաթիւ հայ բանտարկեալները և դատապարտւածները իսկ «աֆֆի Շահանէէէ»—կայսերական ներման արժանացան իրանց չգործած՝ բայց զրպարտւած յանցանքների համար: Նոյնպէս բանտից ազատւեցան և մեր տեսած զնդանից՝ Բաղէշի հայ մէօթէպէլիսնները թէ քաղաքացի թէ գիւղացի, անմեղ սասունցի և մշեցի բազմաթիւ կալանաւորները, բացառութեամբ գեր. Ներսէս վ. Կարախանեանցի և Տամաթեանցի, որոնց արդէն ուղարկել էին Կ. Պօլիս:

«Քրմենի մէսելէս»-ին, հայկական հարց, նահանգական կենտրոններից սկսեալ մինչև ամենավերջին հայ գիւղն, թուրք պաշտօնէից համար բաց արել էր ամենալայն չափով, կաշառակերութեան, զրկողութեան և այլ բազմադիմի անպատիւ վարվողութեանց մի լայն սապարէզ:

Բաղէշում աւելի: Այսաեղ գործող պաշտօնեան երեսակայում էր իրան ընկած «Ալթուն գէրէսին»—ուկիծոր—. էլ կասկած չուներ կլորիկ գեղին սոկինեցը կորպելու, որոնցից ամենազլիսաւոր կաշառակեր և կորպողն էր թահսին փաշան:

Բազմաստորագիր բողոքների վրայ, թահսին փաշան պաշտօնանկ լիներով, նորան յաջորդեց, երթեմն Տիխիսում Օսմ. գօնսիւլ եղող Բաղուալ էֆէնտին: Այս վերջինս՝ որպէս հետևող քաղաքակրթութեան, մի ժամանակ լաւ պահեց իրեն և ապա սկսեց մի քանի հայերը ձերբակալել, որոց թւումն կրկին բանտարկեցաւ Բագալեան Սարգիս աղան. և երկրից հեռացնել տւեց ամերիկացի միսենար պ. Զօրջին, որպէս ինասակար մարդ: Բաղէշի հայերը ակնապիշ սպասում էին խոստացւած բարենորոգումներին: Բայց այն խարուսիկ յոյսերին շատերը հաւատացին, իսկ աւելի լուրջ մտածուները «Թովմայի մահաւատութեամբ մնացին», մինչև չտեսնել ու չհաւատալ, այդպէս էլ եղաւ:

— Այլ ևս կասկած չունիմ, հարիւրին իննսունը հաւատում եմ, որ հայկական հարցը բարձր ի գլուխ պիտի փայլի—վատահութեամբ ասում էր մեր ազնիւ պաշտօնակից՝ Յ. Դուգուխեան *):

Ամեն տեղ, հայկական կենտրոններում սկսել էին բարձր ի կոչ ուրախութեան ձայներ և ցնծութեան աղաղակները լսել:

— Փաթիշահը չօք եաշա. եաշա հայ եաշա:

Այս էր օրւայ նշանաբանն:

Եկեղեցիներում սուլթանի արկշատութեան աղօթքներ անել: Կ. Պոլսից ստացւած նամակներում ևս

*) Յարութիւն Դուգուխեան, այժմ հանգուցեալ, Բաղէշին մօտիկ Հուլթիկ գիւղիցն էր: Մօր շնորհիւ Կ. Պոլս տարւելով, թէ գպրցի և թէ իւր ինքնաշխատութեան շնորհիւ սովորել էր և համարձակ խօսում էր գաղերէն, անգլերէն և գերմաներէն լեզուներ, տեղեակ նոցա գրականութեան: 1890 թ. «Միացեալ» ընկ. կողմից տեսուչ էր Ալաշկերտի գպրցին ուր և բանտարկել էր երկու տարի: Աղատւելով՝ եկաւ Բայէշ և 1895-ին վախճանեց թոքախտից. թաղւեց Կարմրակ եկեղեցւոյ պարտիզում:

նոյն յոյժն և աւետիսն էր տրում. բայց խելացիները շատ վերապահութեամբ էին վարւում:

— Տէր Աստւած, պիտի տեսնենք այն օր—սկեպտիկ հաւատառով ասում էր Խաչ-Մանուկիան Աւետիս էփէնտին, որն նշանաւոր էր երկրի մէջ իւր հմուտ քաղաքականութեամբ: Բայց և նա առաջուց ընկնելով թահսին փաշայի ճանկ, երկու տարի բանտ մնալու վերջ թէկ աղատեցաւ, բայց ոչինչ չտեսաւ...:

— Փառք քեզ Աստւած, մեր պապեր ու հայրերը չտեսան, գոնեա մենք տեսնենք—ասում էր մահտեսի Շողիկեան ծերունագարդ մահտեսի Ղարիպջան աղան, յայտնի վաճառական և բարեգործ մարդ:

Թող լինի այդպէս. մենք էլ սպասեցինք, բայց ինչ է ասում հայկական առածը «մինչև բարակ առունը ջուր գայ, գորտան աչքերը դուրս կուպայ», գետ ոչինչ չտեսանք...

Կ. Պոլսից հայկական գաւառներ և այնտեղից՝ Կ. Պոլս, նամակները փոխանակում են լի յուսաղլական համբաւներով: Թուուցիկ յոյսերը Օրմանեան պատրիարքից սկսեալ մինչև վերջին գրագէտ մարդը կինտրոնից այդպէս էին աւետում:

— Այլ ևս կասկած չունինք, եօթն նահանգների գործը վերջացած և ներկայացւած է վեհ, սուլթանին:

— Սպասնք և տեսնենք—: Այսպէս էին հետաքրքիր ժողովրդի օրւայ հարցը:

«Երկնեց լեամն անագին»:

«Եւ ծնաւ մուկն չնչին»:

Բարենորոգմանց յատկացեալ գործադիր ժողովը նախագահ նշանակւած էր Ս. Պետրոսուրգի նախկին գեսլան Շաքիր փաշան, միջահասակ, լիք կազմով մի վիճուրական, որին և Սէր զօլյուէր էին կոչում: Դա 70 ձմեռ անցուցած մի գառամեալ ծերունի էր: Գօմի-

սէր փաշան Տրապիզոնից սկսեալ անցաւ Կարին, Մուշ, Բաղչշ, Վան և այլ կենտրոնատեղերն Մեծ և Փոքր Հայոց: Աւր որ ոտք դրեց, արեց և ոչինչ: Նորա նախնական կարգավորութիւններից մինը և ծիծաղելին էր. ուստիկանութեան կազմի մէջ նշանակել տալ և մի քանի հայեր, որոնք աւելի գործիք պիտի զառնային քան թէ օգտակար պաշտօնեաները:

Բայց գօմիսէր փաշայի մեկնելուց վերջ, հրկիզութեան, պօգրօմի և կոսորածի տօները ետևիցն էին կատարւում...: Հողը արդէն էլ պարարտ էր, ուրիշները վարել էին և սա՞ ցանեց ու տափեց, ապա յետոյ բաշիրօգուկները և համիդիաները տափառադաշտ արեցին...:

Լաւ բարեկարգութիւն, աչքերնիս լոյս:

Փոքր Հայոց պարերական կոտորածները սկսել էին: Ակնայ սոսկալի ջարդը և փողոցներում ճացած արիւնը անցնում էր և՛ Տիգրանակնրտ, և՛ Սղերդ և այլուր...:

Մօտալուտ էր և՛ Բաղէջին վերահաս վտանգ...: Բարեկամ թուրքերը յայտնում և զգուշացնում էին շատերին, գուշակելով մօտիկ ապազայում և Բաղէջի հայոց գլխին պատրաստած այն չարիքը, խոճեմութիւն համարեցի 1895 թ. արձակուրդին մեկնել և դառնալ հայրենիք—Վան:

Վերջին բարես էր, որ տեղի սիրելի պաշտօնակիցներիս և աշակերտներին: Վերջին ցտեսութիւնն էր, որ արեցի և յարգելի հասարակութեան:

Վան գառնալով՝ նոյն 1895 թ. սեպտ. մտայ Արարուց երկար գլուխի ուսուցչական կազմին մէջ:

Բնարեցի հայրենիքում և հայրենակցացւ հետ ապլել ու մեռնել:

1895 թ. հոկտ. 15-ին հեռագրական տխուր գու-

ժը գուժեց և Բաղէջի և շրջակայից հանրային կոտորածը:

Ճիշտ եօթնուկէս ամսից վերջ, այն է 1896 թ. յունիս 3-ին երկուշաբթի օրը ցորեկայ ժամի 11-ին սկսեց և Վանայ ամբողջ նահանգի՝ աւելի սոսկալի հանրային կոտորածը:

Այդ օր՝ Արարուց ուսումնարանի երկանո ուսանողները և ուսուցիչները մի քանի ժամ փակւած մնացինք դպրոցում. բայց վերջը հրաշքով աղատեցանք անվասա:

Ներկայ էի և ականատես՝ այն բոլոր խժդժութեանց և աւերմանց. և մեր տեղական պաշտպան երիտասարդների հերոսական քաջ դիմադրութեանց որոնք փրկերով հազարաւորների կեանք, իրանք էլ ընկան անձնանշէր նահատակի մահով *): Վան ուղարկած սուլթանի թիկնապահ Սաատէթին փաշան հակառակ կուսակալ նազիմ փաշայի խաղաղասէր կամքին հասաւ իւր գժոխային նպատակին **):

Այն բոլորը դեռ բաւական չէին մեր արիւնախում, անգիտակ դրայիների վրէժինդրութեան պապակն զովացնելու:

Տաճկահայոց 1895—96 թ. հանրային կոտորածից վերջ, սկսեց այնուհետեւ և պարբերական հալածանք, մասնակի սպանութիւններ, խոզգարկութիւններ, և այդ նպատակի տակ թալան-թուրան, մնացեալ կիսաւեր գիւղերի և աւանների կրկնակի աւերումն և որ ամե-

*) Վանայ նահանգի և քաղաքի 1896 թ. յունիս 3—11 հանրային կոտորածի նկարագրութիւնը ևս գրել եմ առանձին իմ «Փշանք յիշողութիւնների» թ. մասում, ոմը յուսով եմ ապագային հրատարակելու...:

**) Վանայ նահանգի և քաղաքի հանրային կոտորածից երեք ամիս վերջ, այն է 1896 սեպտ. 15-ին դէպ կովկաս եկող գաղթականների թուռմն էի և ես բնանիփով. երեք տարի նորբայազէդ մնալուց վերջ, ապա եկայ Տիգիս:

նասոսկալին էր, խմբական և անհատական գաղթաշկանութիւն:

Կարծես թէ՝ բաւական չէին և այն ամեն չար կրելութիւնք Բաղէշի հայ հասարակութեան, աւելի անտեսական վիճակն քայքայելու, տասներկու տարիից վերջ, վերայ է հասնում և բնութեան պատիժը: 1907 թ. ապրիլի սկզբներին մի զօրեղ երկրաշարժ տակն ու վրայ է անում Բաղէշ քաղաքի այն ամրակառոյց հոյակապ շէնքերն: Ութին հարիւր տնից աւելի շէնքերը, որից 144-ն հայելին էր պատկանում. մնում են փլատակների տակ: Տեղոյն ոռուաց հիւպատոսի կողմից Տիֆլիս բժիշկ Զաւարեանցին հեռագրած տեղեկութեանց նայելով, անհրաժեշտ էր շուտափոյթ օգնութեան. բայց որտեղից...: Մարդկային դոհերը եղած են ութին սպանւած, տասնմէկ վիրաւոր:

Երկրաշարժի ահեղ ցնցումից՝ հիմնայատակ կործանւել են մի քանի մզկիթներ և հայոց հինգ նշանաւոր վանքեր, երկու եկեղեցի: Վնասը միլիոնների է համառում: Կործանւել են Բաղէշի մօտիկ Գոմս հայարնակ գիւղ ամբողջապէս և Ղուլթիկ գիւղից՝ հարիւր քառասուն տուն:

Ահա վիճակը Օսմ. հայերի և մամնաւորապէս Բաղէշի: Ինչպէս տեղեկանում ենք, երբեմն այդ շահաստան երկիրը, թուրքերի երևակայած «Ալթուն դէրէսին», այժմ՝ դարձել է աւերակաց մի կոյտ, դարձել է «խարաբայ դէրէսի», որից ուրսափահար փախչում են բնավայրի զաւակներ, օտար երկներում, օտար պայմանների տակ, մուրալով և չարքաշելով կփնտռեն իրանց հացը...:

Բայց թէ Երբ պիտի փայլի Թուրքահայոց բարօրութեան, ապահովութեան և կուլտուրական զարգացմանն աւետարեր արշալոյսը, մեծ յուսով պիտի սպասել և տեսնել:



ՀՀ Ազգային գրադարան



NL0358712

47585

12-46152

ԽՄ ԱՇԽԱՏԱՍԻՐԱԾ ԳՐԲԵՐԻՑ ԼՂՅՈ ԵՆ ՏԵՍԵԼ

1. «Սրտի թարգմանու» բանաստեղծութիւններ,
Տիկիս 1884 թ. (սպառւած). 50
2. «Վանայ Սագ» առաջին մաս. հաւաքածոյ
Գասպարականից ժողովրդական երգերի,
հէքիաթների, առածների, հանելուկների,
ջան-զիւլումների, իրանց վերաբերեալ ճոխ
բառարանով 1885 թ. 75
3. «Վանայ Սագ» երկրորդ մաս. նոյն բովան-
դակութեամբ, աւելացած մի մաս օրէնու-
թիւններ և անէծքներ, նմանապէս ժողո-
վըրդական բառարանով 1898 թ. 75
4. «Վանայ Սագի» թէ առաջին
և թէ երկրորդ մասը զրբերէց ստամալ
կարելի է Երևանի թիւմ. զպրանոցի վար-
չութիւննից, որին արդէն յանձնւած է Տըփ-
խսի «Հրատարակչական» ընկերութիւնից:
4. «Մրրատիայրեր» տեղազրութիւն Վասպուրա-
կանի Դանոյ նահանգի զիլաւոր եկեղեցի-
ների, վանքերի և ուսումնարանների, տըպ-
ւած Տիկիս 1902 թ. 40

ՑՊԱՐԵԿԱՀ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ

1. «Մոռացած գաւառներ» Մոկք և Շատախ—տեղա-
դրական-ազգագրական նիւթել:
2. «Կենասպրական» Վասպուշականի նշանաւոր զրո-
գէտ գործիչների համուցեալ Հայրապետ Հայրէ
կի, Գ. Մրւանձտեանցի և նոցա հետեւողների
սկսեալ 1855—1896 թ. մինչև հանրային կոտորած.

ԲԺ Խաղթ. 6՝ Տիֆլիս, Տանօսեկա պերկով Գ. Ռերենց.